



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



0123

ՀԱՅ-ՀԱՅԿԱՆԿՐԵ

10.10

# ԶԻՒԱՆՈՒ

# ՔԱՐԵ

ԼԻՎԱՏԱՐ ՀԱԽԱՔԱՌՈՒ

ԻՆՔՆՈՒԹՈՅՆ ԵՒ ՓՈԽԱԳՐՈՎՈՂՆ ԵՐԿՈՍԻԹՈՒԹԻՆՆԵՐԻ

ՈՏԱՆԱԽՈՐ ԵՒ ԱՐՁԱԿ

(ՅԵՂԻՆԱԿԻ ՊԱՏԿԵՐՈՎ)

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Վ.Ա.Վ.Ա.ԲՃԱ.ՊԱ.Տ

Տպարան Մայր Աբովյան Ա. Էջմիածնի

1904

10 NOV 2011

891.99

3-62

ԶԻՒԱՆՈՒ

ՔՆԱՐԸ

ԼԻԱԿԱՏԱՐ ՀԱԿԱՔԱՌՈՒ

ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԵՒ ՓՈԽԱԴՐՈՒԿԱՆ ԵՐԿԱՍՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՈՏԱՆԱԽՈՐ ԵՒ ԱՐՑԱԿ

100/  
3570

Ա. Բաժանմունք — Ոտանախորներ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

Վ. Ա. Պ. Ա. Պ. Գ. Ա. Պ. Ա.

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1904



Дозволено цензурою 31 июля 1903 года, г. Тифлисъ


## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ



ի-երկու տարի առաջ լոյս տեսաւ «Զիւանու Քնարի» Օ. հատորը, զանազան նանգամանեներ պատճառ եղան ներկայ Բ. հատորի՝ եւ այնուհետեւ միւս հատորների շարունակաբար հրատարակութեան գործիլայսչափ դանդաղելուն: Ահա լոյս ընծայելով Բ. հատորը, յոյս ունեն միւս՝ գրեթեն էլ մօս ժամանակներում յաջորդաբար հրատարակել եւ բաւարարութիւն տալ ինչպէս մեր սակաւարի բաժանորդներին, որ այսչափ սպասեցնել տուինք, այնպէս էլ հայ երգասէր հասարակութեանը որ միշտ նոր երգ ու տաղի պահանջ ունի:

Նիւթերի դասաւորութիւնը այս հատորից սկսած փոխում է. այժմ իւրաքանչիւր գրեում մենք տեղաւորում ենք ամեն տեսակի ու բնաւորութեան երգեր, որ ընթեցողը միատեսակութիւնից չը ձանձրանայ. այնպէս որ երբ այսպիսով կաւարտենք մեր ամբողջ հրատարակութիւնը, «Զիւանու Քնարում» տպագրած կը լինինք առուղ Զիւանու մինչեւ այժմ եղած բոլոր երգերը, թէ՛ զանազան ժամանակներում տպուած, թէ՛ նոր, անտիպ երգեր:

անունից առևէ այլ զանա քառ արթեց  
պարզ Յարավար զբանը չէ պահպան  
անգամ և Պատրի Դ ըսթեց առաջորդ պահպան  
ապահոված շաբաթին առաջ գովազան առեւ պահ  
Խոհանո՞ւն այլ առաջ Մարդութեար եղանակները կույց  
Հաւաքառականները եւ Շահեաց առաջ առաջ պահպան  
առաջ ու պահպան ու պահպան առաջ առաջ առաջ պահպան  
ապահոված պահպաններին այս առաջանակ այս առաջ առաջ պահպան





ԱՇՈԽ ԶԻՀՈՒՆԻ  
(ՕԳ. 1816 թ.)

## Բ. ՄԱՍ

### ԱԶԳԻ ԴՐՈՒՅԹԻՒՆԸ

Հայի անցեալը, Աերկան եռ սպազան.—Վիշտ ոռ ցախ,  
Կորուսու ոռ տանջանք—շառ ոռ վաստ օրեր։  
Փոխաշերսկան։

**Ա**րեն ելաւ, փախէք աստղեր մի անկիւնում թաք կացէք.  
Սև սև ամպեր հալածուեցէք, ճանապարհից հեռացէք.  
Օդը պարզ է, մոլորակներ, հորիզոնում ամպ չըկայ  
Արեգակի չորս բոլորը պար բռնեցէք, խաղացէք:

Յնձա տխուր իմ հայրենիք, ցուրտ ձմեռը անցկացաւ。  
Զուարձալի խնդում բերող նոր գարունը մօտեցաւ,  
Հայ աղջիկներ, ձեր տխրութեան ժամանակը լրացաւ  
Մրտով սիրած փեսաներով ուրախացէք, խնդացէք:

Արդարութեան արեգակը եկաւ, բերեց նոր զատիկ.  
Ճնշուած, ընկած տխուր աղջեր ահա նոր լուր, աւետիք.  
Տօն է այսօր ձեղի համար, սոխակ, թուժակ, արտուտիկ  
Մայիսն եկաւ, վարդը բացուեց, երդեցէք, ճառ կարդացէք:

1902

ՀՕՅԹԱՑ

**Ա**նչեւ կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ,  
Ով իմ ծննդավայր սրբազան երկիր.  
Ես մի չոր կեանք ունիմ, թող քեզ նուիրեմ,  
Ինձ կեանք չնորհող մայր, աննման երկիր:

Շատ ունիս անձնագոհ, եռանդուտ մշակ,  
Քեզ սիրում են որպէս հարազատ զաւակ.  
Աղատ շունչ կը քաշես կուգայ ժամանակ,  
Սպասէ և յուսա, պատուական երկիր:

Դու ես աղգայնութեան հրահանդ աըսուղ  
Մրտիս մխիթարանք, սփոփանք աըսուղ.  
Նախնիքներուս սնունդ աըսուղ, կեանք աըսուղ,  
Իմ բնիկ հայրենիք, բնական երկիր:

Ջրանին երբ պիտի տօնէ զատիկ.  
Ապրիլ ամսում արև դարձած մահիկ.  
Փոխուած տեսնէի քո կրակէ շաղիկ.  
Հագնէիր նոր տեսակ պատմուճան, երկիր.



ԻՄ ՀԱԽՈ

**Պ**իմացկուն, համբերող, կշկըչան հաւիս  
Աշխայժը չի կորել, խնդալը տեղն է.  
Առատածին, պարարտ իմ ածան հաւիս  
Կըշտեկուշտ վագելը, մանգալը տեղն է:

Ուրուրը ինչքան որ կուզէ սպանէ,  
Հաւը չի վերջանայ, հաւութիւն կանէ.  
Նորից հաւկիթ կածէ, ձագեր կը հանէ,  
Թուխսը բնի մէջն է, բունկալը տեղն է:

Զիւան, արեդակը քանի չէ նոնջել,  
Սև ամպերից դու մի վախել, երկնչել.  
Լուսնիակը նորան չի կարող ջնջել  
Հաւիս փայլուն աստղը, զոհալը տեղն է:

1899

## Ա Պ Ա Տ Հ Ա Վ Ո Բ Ծ

Աղքատ հողագործ, մի վհատիր, կալոցը մօտ է  
Արտերը հասել են, սիրելիս, քաղցը մօտ է.  
Հունձը առատ է, բանւոր ու մըշակ է պահանջում,  
Սրեր քու գերանդին, մանդաղը, խարտոցը մօտ է:

Արդար հողագործ, կանչում է քեզ սուրբ դատաւորը  
Դրախտի դուռը բացուել է տես, վարդոցը մօտ է.  
Հանդիստ ապահով կարող ես հասնել նպատակիդ-  
Յղած խճուղին, մարմարաշէն փողոցը մօտ է:

Գեղջուկ տառապեալ, վարձ պիտի տան, շուտ հասիր այնտեղ  
Սրբոց կայանը, մարտիրոսաց ամրոցը մօտ է.  
Փրկիր Զիւանուն, տար քու հետդ արդոյ նահատակ  
Անփուշ, հոտաւէտ, հրաշագեղ ծաղկոցը մօտ է:

1899



## Պ Ա Զ Ի Ա Զ Ե Ւ

Տեսակ-տեսակ կենդանեաց ճանկը ընկար, քաջ բաղէ.  
Դու ոչ մէկի որկորին բաժին չեղար, քաջ բաղէ.  
Թէ խելքով, թէ շնորհքով հնար գտար, քաջ բաղէ.  
Մինչև հիմա ապրեցիր՝ ու չը մեռար, քաջ բաղէ.  
Ով որ ուղեց քեզ ծամել, պողպատ դառար, քաջ բաղէ,  
Ատամները չը կտրեց, ողջ դուրս ելար, քաջ բաղէ:

Կենդանեաց ատամները կողերդ ծակծակեցին,  
Թէւ չը տկարացար, արիւնդ խառնակեցին.  
Զանազան նոր ախտերը մարմինդ վարակեցին,  
Բարեխառն հովերը մաքրեցին, խստակեցին.  
Սև օձը քեզ կաշկանդեց, բնիդ մէջը փակեցին.  
Փետուրներդ քաշեցին, էլ չը թռար քաջ բաղէ:

Արծիւը, արագիլը թե-թեկի տուած կուգան,  
Ծովային մեծ բաղի հետ պիտի հասնին օգնութեան.  
Գեր կոռւնկը թող լոէ, օձին լինի սիրեկան  
Ջայլամի, կարապի հետ թող նա մնայ անբաժան.  
Նոր աշխարհի սագերը բաւական յոյսեր կուտան,  
Մէծ երամներ կը կազմեն քեզի համար, քաջ բաղէ:

Օձմանածեան վիշապի նոր ճարած բարեկամը  
Կուզէ հանել բերանից իւր առաջին ատամը.  
Առանց արիւն թափելու խառնածին մեծ ջայլամը,  
Խլեց նորա ձեռքիցը թանգագին երկու ծամը.  
Վշած, սաստիկ փրփրեց, կատաղեց այս անդամը,  
Վերջին հուժկու հարուածը դու ստացար քաջ բաղէ:

Ահա երկու ճանապարհ—ցոյց կուտայ քեզ Զիւանը—  
Այդպէս ապրիլ կը ցանկամ՝ թէ մտնիլ գերեզմանը.  
Քեզ չի կարող վնասել օձերու պազ իշխանը  
Նրա տուած վէրքերուն դիտես դեղ ու դարմանը.  
Կոկորդիլոսը քեզի թէ առաւ իւր բերանը՝  
Ել փրկութեան յոյս չը կայ, բանից պրծար, քաջ բազէ:

1895

## ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

Սշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար քաշում է փափադ  
ակ սիրուն սիրուն.  
Չի լինիլ քեզ պէս ամենայն երկիր փայլուն արուսեակ  
ակ սիրուն սիրուն.  
Կստանաս համբաւ, քիչ էլ սպասէ, կուգայ ժամանակ  
Փառք ու պատիւդ քեզի կը յանձնեն քոյրիդ նմանակ  
ակ սիրուն սիրուն:  
Եղեմեան ծաղիկ, հայրենի հողով սնուտած մանուշակ  
ակ սիրուն, սիրուն.  
Հողիդ անարատ, տեսքդ գերազանց, մէկ հատ օրինակ  
ակ սիրուն, սիրուն:  
Արտիս ու հոգոյս միսիթարութիւն քեզանով է միշտ  
ակ գեղատու կին  
Յոյսս դրած եմ ես բոլորովին սիրելոյդ վերայ աշխարհաւ  
տիկին:

Ազնիւ թագուհի, շնորհօք լեցուն, այցելութիւնդ է մեղ  
կաթողին  
Զարդացած մոքով եւրոպացու պէս, թէև ասում են  
քեզ ասխածին.  
Փնտրում են քեզի շատ սիրահարներ աշխարհիս մէջը  
որտով լալադին  
Բացի քեզանից թէ լոյս էլ լինի, չէ մեղ ընդունակ  
ով սիրուն սիրուն:

Ի՞նչ կըլնի արդեօք արժան համարես դէպի մեր կողմը  
դաս այցելութեան  
Փափադդ քաշող, տեսնում ես, շատ կան, պատկերդ ցոյց  
տուր լինինք բաւական,  
Քեզ սիրողներուն դու մի չարչարեր, քիչ խնամք արա  
անուշ սիրական.  
Լուր պաղատանքս, ով իմ սիրուհի, վիրաւոր սրտիս  
տուր գեղ ու դարման.  
Ոչ դու մեղի պէս կարող ես դտնել, և ոչ մենք քեզի  
մէկ համանման.  
Դու մեղ թագուհի մինչև յաւիտեան՝ մենք քեզ հպատակ  
ով սիրուն, սիրուն:

Ա՛խ, պիտի տեսնեմ ես քու երեսդ, թէ պիտի մեռնիմ  
թերի փափադով  
Այրում ես դու ինձ ամենայն միջոց անարատ սիրոյդ  
անշէջ կրակով.  
Գոնէ ամիսը լուր տուր մի անգամ, տեղդ իմանանք փոքր  
նամակով.  
Քեզի է կապուած մի մեծ ընտանիք հաստատուն յուսով  
բախտով վիճակով  
Հասկացիր միտքս թէ ինչ եմ ասում, քեզի խնդրում եմ  
ինչ նպատակով.  
Խօսքիս համեմատ շարժուիր գեղեցիկ, գործէ շարունակ  
ով սիրուն սիրուն:

Իշխանուհիներ աշխարհիս շատ կան՝ բայց մեզ անօգուտ,  
իմացիր հաստատ  
Նոքա օտար են, չեն սիրեր սրտով, կեղծ ու պատիր են  
արտաքին և վատ  
Ուրեմն մօտ եկ, դու իմ սիրելի, իմ արենակից տիկին  
հարազատ  
Քո սէրդ սուրբ է, ով սիրուն անմեղ, բարքով ու վարքով  
սրտով անարատ.  
Տացէ Արարիչ մնաս անխափան միշտ վեհ անունով  
անկախ ու ազատ,  
Խղճալի երդիչ Զիւանուս համար մնաս յաջողակ,  
ով սիրուն սիրուն։

1881



Առաւոտը շատ մօտ է, լոյսը շողալուն քիչ մնաց.  
Խաւարը ընկաւ գետին, արեը գալուն քիչ մնաց.  
Համբերանքդ ծով արա, յոյս ու հաւատդ պինդ պահիր  
Ռվ գիշերից ձանձրացող, բախտիդ խաղալուն քիչ մնաց։  
Լուսինի պաղ երեսից շուտով կաղատուիս, մթնակեաց,  
Զերմ ու կարմիր արփենուն, կայծը եռալուն քիչ մնաց.  
Յերեկը եկաւ տիրեց գիշերային ամրոցներուն,  
Խաւարը հոգուն հետ է, իւր կեանքը տալուն քիչ մնաց։

Լուսաբերը մթութեան թագուհու տեղ գահ բարձրացաւ  
Ցնծութեան երգեհոններու որոտալուն քիչ մնաց.  
Մարտի տասն է, Զիւանի, սխառը ունիս շուտ վերջացուր,  
Գարուն է արդէն, գիտենք, ամալը գոռալուն քիչ մնաց։

1889

## ՀԵՐԵՒԻ ՄՐՄՈՒՆՁԼ

Փոյրերիս մէջ միշտ սգագիւեաց ինձ նման տխուր չկայ。  
Դժոխումն էլ իմ ունեցած կրակիս պէս հուր չկայ.  
Ծարաւ պապակ այրըսում եմ, ոհ, մի կաթիլ ջուր չըկայ.  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ։

Իմ տարիքս անցնում են շուտ, գլորւում են հանապազ,  
Ախ իմ յոյս, իմ փափագս կը համարուի միշտ երազ.  
Որտեղ ձայն ու շարժում լսեմ, կը վազեմ այնտեղ վռազ,  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ։

Զէ քո խղճալի հարաւն եմ, ինձի օգնէ քաջ Հիւսիս  
Քեզ եմ տուել իմ Ախսուրեան, իմ անառիկ մեծ Մասիս  
Ե՞րբ կը լսեմ աւետեաց լուր, ուրախութեան աւետիս.  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ։



## ՓԵԼ

Բ լ չեմ սիրում, ատեցի, կարմիր ուանդ ալ ֆէոը  
Ահագին աղմուկ հանեց արաւ զալմազալ ֆէոը.  
Իմ եղբարցս արիւնովներկըուած ծալծալ ֆէոը,  
Չեմ կարող գլխիս դնել մեղերու ջուալ ֆէոը.

Թեթև բրդից յօրինուած հինգ տասը մախալ ֆէսը,  
Դարձաւ ծանր, ահագին երկաթէ կոպալ ֆէսը:

Դիտեմ, շուտով կը փայլէ քառաթե արեգակը,  
Աստղերու հետ կը կորչի մեծամիտ լուսնիակը.  
Էլ ոչ ոքից չի սիրուի արիւնաներկ դտակը,  
Շուտով կը մնանկանայ հնարող հեղինակը.  
Կտոր-բրդուն կը դառնայ ոչխարաց ոտի տակը  
Արիւնարբու թունաւոր օձ ու ոխակալ ֆէսը:

Զուր տեղը գոյն են զրկում ներկելու եւրոպացից  
Նա ամեն օր ներկում է արիւնով Ասիայից—  
Մէկ ժամանակ կարմիր փայլ կառնէր Բուլղարիայից,  
Այժմ թողեց այն տեղը, ոկտեց առնել Հայից.  
Հարիւր տարի չի քաշիլ դուրս կը նետուի մօտայից,  
Դարձել է բիւր-ծականի ցնցոտի, հին շալ ֆէսը:

Մեծամտաւ, լայնացաւ, հպարտութիւն սովորեց,  
Անմեղ արեան գոյներով սիրուն գոյնը պղտորեց.  
Զե ու կաղապար տուող վարպետներուն աքսորեց  
Որոնց էլ բանտերու մէջ ճիճուի նման տրորեց.  
Իրեն յարդող և սիրող ժողովրդին կոտորեց,  
Մնաց անմարդ, անծածկող, գործեց մեծ սխալ ֆէսը:

Իմ թանգարին գլխարկիս կը մնամ հաւատարիմ  
Ամենւին չը փոխել հաւատս, ուխտըս է իմ,  
Իմ երկըրի դտակը, սերտ բարեկամ, մտերիմ,  
Նրան չը հաւանողը թշնամիս է ոխերիմ.  
Ողջ աշխարհից յարդուած գլխիս շլեապա ունիմ  
Ի՞նչ եմ անում հնացած անկար, անշուլալ ֆէսը:

1897



## ՅԱՏ ՈՒՉԱՑԱՐ

Փրկութեան աւետաբեր սուրհանդակը շատ ուշացաւ.  
Ուրախութեան լուր տուող մեր նամակը շատ ուշացաւ.  
Իմ մօրս եղբայրները իմ մասին իսկի չեն խօսում,  
Կրթըուած, թղթիկ բերող աղաւնեակը շատ ուշացաւ:

Քիչ կը մնայ ունեցած յոյս ու հաւատս կորսըուին,  
Խաւարը ինձ տանջում է, աշտանակը շատ ուշացաւ.  
Լրիւ երկու տարի է սպասում եմ մէկ ձայնի ես,  
Ողջ ժամերը կանդնեցան, ժամանակը շատ ուշացաւ:

Խեղճ հաւի արիւն խմող գող ուրսուրը ապրում է գեռ  
Երկնային մեծ հարուածը, ուժանակը շատ ուշացաւ.  
Ո՞վ Զիւան, հորիզոնը կարկըտի ամպեր շատ ունի  
Հաշտութեան կամար կապող աղեղնակը շատ ուշացաւ:

1897

## ՀԱՅԻ ԲՐԼԻՌՈՒԼԻՆ

Պարձիր, հայի բըլբուլ, դարձիր Հայաստան  
Օտար երկրում քմբիդ յարմար վարդ չըկայ.  
Ճերմակ վարդը քեզ չի դառնալ սիրական  
Սրտիդ մօտիկ կարմիր-կատար վարդ չըկայ:

Գնա, հայի բըլբուլ, քո տեղդ երդէ  
Զեն հասկանալ երդդ, այստեղ յարդի չէ.  
Փնտրածդ ծաղիկը դրախտում պտրէ  
Յուրտ աշխարհում մշտադալար վարդ չըկայ:

Սեպտեմբերը եկաւ, աշունք է, աշունք.  
Թոշնել, թառամել են, տիրել են ծաղկունք.  
Յարգանք պահանջելու չունիս իրաւունք  
Որովհետեւ քեզ սիրահար վարդ չըկայ:

Զիւան, հայի երդը հայի մօտ կանցնի,  
Հայ բըլբուլը օտար երկրում չի ապրի.  
Անտեղի մաշուելով իզուր կը մեռնի  
Այս կողմերը նորա համար վարդ չըկայ:

### Ի Բ Ե Խ Ո Ւ Ն Ք

**Պ**ող ես մշակ լինիմ; դու եղիր իշխան—  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի.  
Թէ կուզես հաշտ ապրինք, բարի հարևան,  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,  
Ի՞մ պարտքն է աշխատեմ, ոչ ոքի չը տամ.  
Թէ կուզես իրար հետ մնանք բարեկամ,  
Պատուիս ու կրօնիս հացիս մի դիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ  
Պատիւ չեղած տեղը հաց չըկայ առատ.  
Կը ցանկաս որ չանեմ քեզանից դանդատ  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:

Բնաւ չեմ նախանձի քու ճոխ սեղանին  
Քու սսկուն, արծաթին, քու գանձարանին.  
Այս երեքով կապրի աշըլ-Զիւանին  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի դիպչի:  
1898

### ԽԵՆԹ ՈՉԽԵՐՆԵՐԸ

**Մ**ըրի միջից ելան, մըրջուրը մտան—  
Երջանկութեան հասան խենթ ոչխարները.  
Բորենուց փախչելով, դայլի ճանկն ընկան—  
Տէր ու պաշտպան գտան խենթ ոչխարները:

Տեղերը մնացին այծերը խիզախ,  
Պոզերը սրեցին, կռուեցին անվախ.  
Թողին գոմ ու արօտ և սիրուն փարախ,  
Խրտնեցան ու փախան, խենթ ոչխարները:

Իրանց տեղը կեմով էին կապկապած,  
Այլ տեղ պողպատ շղթան վզերը անցած.  
Խորովածի համար յարմար արարած,  
Կաթ ու բուրթ էլ կուտան խենթ ոչխարները:

Իրանց հին հովիւը իրանցից խելառ,  
Կոտորեց չափաղանց մատաղահաս գառ.  
Այդ հարուածը եղաւ նրանց բուն պատճառ,  
Որ տարագիր եղան խենթ'ոչխարնեցը:

Հզօր հովուի հօտի հետը միացան,  
Փրկըուելու էլ յոյս չըկայ յաւիտեան.  
Իրանը իրանց պատրաստեցին գերեզման,  
Հաղիւ հանգստացան խենթ'ոչխարները:

1902

ՀԱՐԱԿԻ ՊԻՏԻ ԳԱՅ

Աւետարեր խօսնակը հայուն հարաւէն պիտի գայ,  
Կսպասեմ և յոյս ունիմ, գարուն հարաւէն պիտի գայ.  
Հիւսիսը պէտք է հրամայէ, թախանձէ իսկապէս,  
Իմ սիրուհին պճնըուած, սիրուն հարաւէն պիտի գայ:

Արեւելքը ոչ մի ժամ արեմուտքից բան չսպասէ,  
Քաղցրախօս մխիթարիչ թռչուն հարաւէն պիտի գայ.  
Փրկչը հարաւային կողմից եկաւ մեզ փրկելու,  
Այնպէս էլ մեծ առաքեալ արթուն հարաւէն պիտի գայ:

Շատ վաղուցուայ ամուլը յղի այժմ կարծում են  
Երբ լինի արու զաւակ, արբուն հարաւէն պիտի գայ.  
Երբ բարով մկրտութեան համնի մանուկը, ով Զիւան,  
Կնքողից բարձրապատիւ անուն հարաւէն պիտի գայ:

16

ԺԻՌՈՒԻ ԺԱՅ

Ես մի ծառ եմ ծիրանի,  
Հին արմատ եմ անուանի.  
Պտուղներս քաղցրահամ,  
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արևելեան,  
Զունիմ որոշ այգեպան.  
Տունկերս ամեն երկիր  
Բնկած են բաժան բաժան:

Ապրում եմ խեղճ, միայնակ,  
Որոշ ծառի շըքի տակ.  
Հիւթս որդունքն է ծծում,  
Իմ տունկերուս փոխանակ:

Տունկերս ուր էլ որ գնան,  
Թէպէտ նոյնը կը մնան,  
Բայց օտար հողի վերայ  
Զեն աճիլ, կը չորանեան:

Արեւելքում ինձ անկեց,  
Երբ որ Տէրը ստեղծեց.  
Ասաւ աճէ, բազմացիր,  
Մի այգի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան,  
Հարաւից հոկայ իշխան.  
Այն հոկայի անունով  
Կոչուեցայ ծառ Հայկական:



Չորս հազար տարուայ ծառ եմ,  
Մարմինս պինդ, կայտառ եմ.  
Թէև ոյժս պակաս է,  
Բայց անունով պայծառ եմ:

— օ օ —

Հ Ե Ց Ը

Աւղտի պոչ է բախտը հայոց.  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի.  
Դնես հազար տեսակ հալոց,  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:  
  
Թէ թուրքիոյ մէջ տկարանայ,  
Ռուսիայում կը զօրանայ.  
Հայը կայ և միշտ կը մնայ.  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:  
  
Թէ մեղնից մի հայ դուրս գնայ,  
Տեղը մի քուրտ հայ կը դառնայ,  
Հաշիւը իւր տեղը կուգայ  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:  
  
Թշնամու կարծիքը թիւր է—  
«Ուր որ գնայ նա լաւ հիւր է».  
Հայ ազգը ճռիկ ազբիւր է,  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:  
  
Կեանք ունենայ մարդավայել,  
Գուցէ թուով դառնայ յաւել.

Աստուած այսպէս է կամեցել,  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:  
Զիւան, հայը ջոկ, իւր դիմին,  
Երկիր չի ունենալ առանձին.  
Նախանձները թող չը տրտմին,  
Ոչ կաւելնայ, ոչ կը պակսի:

1895



Թ Ա Ղ

Թ ող ինչպէս ընկել եմ, այնպէս վեր կենամ,  
Դիմակաւոր ընկեր, խրատդ պէտք չէ.  
Թող իմ հօրս, պապիս ճամբովը գնամ  
Հաւատ ունիմ; քու նոր հաւատդ պէտք չէ:

Այն գունով կը մեռնիմ, ինչով որ ծնայ.  
Զեռք մի տար իմ վէրքիս, թող այնպէս մնայ.  
Մի կտրատիլ ծառիս ճիւղերը, գնա,  
Վնասատու կոպիտ մկրատդ պէտք չէ:

Միայն դու Զիւանուն եղբայր անուանէ,  
Միւս ծրագիրդ մաքիցդ հանէ,  
Իմ ըլբլած տունս ինձ բաւական է  
Քեզ լինի, բարեկամ; պալատդ պէտք չէ:

1899



Թ Ա Պ Ա Յ Ե Յ

**Պ**ող մնայ մէկ ժամանակ, առիւծը թմրտծ թող մնայ  
խաժամուժ կենդանիներու մէջը ընկած թող մնայ.  
Մեռածը չի ողջանալ, գլորուածը վեր կը կենայ.  
Թոյլ թուէք, ախոյեանի ժամը չէ, պարկած թող մնայ:  
Անտեղի քաջութիւնը մնաս կուտայ իմ կարծիքով,  
Երբ լինի կարկուտ, քամի, եղէքը սմբած թող մնայ.  
Տաք ու պաղ փշեռվդ մի գրգռեր, խարդախ թովիչ  
թող մնայ իւր բնի մէջ, վիշապը սառած թող մնայ:  
Զրի շատ գալը, խելացի, կտրելու նշան է իսկ.  
Թող ծովը ծփայ յատուկ, գետը վարարած թող մնայ.  
Ո՞վ Զիւան, ամեն հայի սրտի մէջ երկար միջոց,  
Հնութեան յիշառակը, կայծը բռնկած թող մնայ:  
1892

Փափուկ քնարի ձայնովը հոդիդ պիտի հրճուի  
Գողթան մուսաներէն սիրոյ երգակ պիտի հասնի.  
Աներկբայ եղիր փեսայի գալուն, սիրելի կոյս,  
Երկնից ուղիով օդի սուրհանդակ պիտի հասնի:

Քո տիսրութիւնդ ձմրայ նման փոխուելով յանկարծ,  
Զուարճալի օր, քաղցր եղանակ պիտի հասնի.  
Խնչպէս Սառային, Սբրահամին խնդացուց Աստուած,  
Քոյլ իմ, քեզի էլ այնպիսի զաւակ պիտի հասնի:

Մեծ Բարերարը արծուի թևերու վերայ նստած,  
Եղբայրներովդ քեզի օժանդակ պիտի հասնի.  
Դժոխքը, Զիւանի, էլի դրախտ պիտի դառնայ,  
Զար դեի տեղակ բարի հրեշտակ պիտի հասնի:  
1889

Ի Ն Չ Ո Ւ Ի Լ Ր Ո

**Պ**նչու լամ, երբ չեմ մանուկ, ծծկեր եւեխայ, ինչու լամ.  
Լացի համար չէ ծնել սերունդը Հայկայ, ինչու լամ.  
Շատ ժամանակ ողբացի, լացի ողբացի, բան չեղաւ,  
Քանի որ ես ոյժ ունիմ, լայն ասպարէզ կայ, ինչու լամ:  
Երբ մի մարդիւր մահովը հարիւր-հազարի կեանք կուտայ,  
Ես պիտի ուրախանամ զոհուողի վրայ ինչու լամ.  
Փորձեցի, աչքով տեսայ զօրեղն է աշխարհի տէրը.  
Ես լացով իմ վերքերուս հնար չը դույ, ինչու լամ:

Նեղ օրում մէկ դանակը հազար լացից առաւել է,  
Գայլը ողբից ամենեին բան չի զգայ ինչու լամ.  
Քրտի հետ քրտի նման վարուիլ կուղէ, ով մարդ բարի,  
Երբ վառօդի ձայնիցը աշխարհ կը թնդայ, ինչու լամ:

**Պ**նդա սիրուհիս, քեզ բարի վիճակ պիտի հասնի.  
Մեծ Բարերարից պարգև ու պատկ պիտի հասնի.  
Սրտիդ սիրածը, հոդ մի անիլ, յետ կը դայ անշուշտ,  
Սօտիկ օրերս բաղձալի նամակ պիտի հասնի:

Արքայութիւնն էլ ուժեղ մարդիկ կը ժառանգեն յատուկ,  
Ծոյլ, անաշխատ լաց լինողին դրախտ չըկայ, ինչու լամ.  
Ժողովուրդը կեանք կուզէ, ապրել կուզէ, յոյս տալ կուզէ.  
Ես Զիւանիս անտեղի, անսիրտ, ակամայ ինչու լամ:

1894

## ՍԵՐՈՅԻ

Անոյժ, ձմրան արև դարձաւ վառարանը հայոց բախտին.  
Զիւնով ծածկուած սարի պէս է տեսարանը հայոց բախտին.  
Մի կողմից սառնաշունչ հողմը, մի կողմից խորշակը անդութ  
Բերանը բաց նայում է խոր գերեզմանը հայոց բախտին:

Շարօւնակ սրտաճմլիկ վէրք ու ցաւ է պտուղը գրչին,  
Տխուր տրտում ու թախծոտ է վիպասանը հայոց բախտին.  
Լոել է քաղցրախօս հաւը, չի երգում անուշիկ երգը,  
Սգոյ օթեան է դարձել բուրաստանը հայոց բախտին:

Տալիս է ոյժ, զօրութիւն նեղ օրերում այդ ժողովրդին.  
Հզօր է ամենաբարձրեալ ապաստանը հայոց բախտին.  
Զիւանի, խաչի հետ լուսնին դատաւորը պիտի կանչէ.  
Մօտիկ է, շուտ լինելու է դատաստանը հայոց բախտին:

1902



## Գ. ՄԱՍ

### ԱՇԽԱՌՀԻ ԲԱՆՔ

Տիուր լիսաւեր—վիշտ ու գրկանք—համաշխալիսյին  
թախիծ.—ցաւ ու դարտ.—ծերութիւնն, սղաստութիւնն.  
պանդիստի ջարրաց օրը: Առև օրեր:



ԽԵՂՔՆ Է, ԱՅԺՆ Է, ՅԵՏՈՅ ՀԱՐՍՑՈՒԹԻՒՆԸ

Երկրագնտի տէրը, երրորդութիւնը  
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը.  
Աշխարհի պինտ պահող հոյակամ սիւնը  
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը:

Հին Աստուածը գրքերու մէջն է հիմա  
Կամ երկինքն է, մեղնից հեռու, բացակայ.  
Երկրագնդի վրայ ուրիշ աստուած կայ,  
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը:

Որտեղ մի լաւ գիւտ կայ, խելօքն է գտել.  
Անառիկ բերդի մէջ ուժեղն է մտել.  
Նոր երրորդութիւնը չես կարող ստել,  
Խելքն է, ոյժն է՝ յետոյ հարստութիւնը:

1900



**Պ**ատում է ամենայն մարդ, աշխատում է հացի համար,  
Գիւղէ-գիւղ, քաղքէ-քաղաք թափառում է հացի համար,  
Ուրիշ հողին տիրանալ՝ մարդու փորն է ստիպում.  
Տէրութիւնը տէրութեան հետ կռւում է հացի համար:

Ուրանում է ազգ ու աղինք, թողնում է հայրենիքը,  
Անսուաղը իւր կրօնը փոխում է հացի համար.  
Անտէր ու անտիրական ողօրմելի աղքատ կինը  
Դառնում է անբարոյական, ընկնում է հացի համար:

Եթէ հարկը չը ստիպէ ոչ ոք տնազնիւ չի լինի.  
Մարդը մարդուն համոզում է, խարում է հացի համար.  
Տեսնում է ինքը չունի, հարևանը ունի չի տալ,  
Նա դրացու տան վրայ յարձակում է հացի համար:

Ծերունի խեղճ ծնողը քաղցից շարունակ նեղուելով,  
Ո՛չ, իւր հարազատ դաւակը ծախում է հացի համար.  
Ով Զիւան, երգին էլ ունի ստամոքս, հացի պահանջ,  
Ման է գալիս, նուազում է, երգում է հացի համար:

1902



**Բ**ժիշկն առողջ, քարողիչը՝ ապահով  
Եթէ չեղան—նրանք գործ չեն կատարել.  
Աղքատ մարդը թէ լինի էլ խելքի ծով,  
Ծաղը անելով կը սկսեն խանդարել:

Առողջութիւնը մի յոյս է, եռանդ է,  
Տկարներուն նոր ոյժ, նոր կեանք կաւանդէ.  
Ապիկար է երբ բժիշկը հիւանդ է,  
Տկարներուն նա չի կարող դեղ ճարել:

Տնանկ քարողիչը երբ խօսի խրատ,  
Կասեն՝ թէ խելք ունի ինչու է աղքատ.  
Խեղճ, չքաւոր դատաւորը յուսահատ,  
Մի հաւատալ, նա արդար դատ չի վարել:

Բժիշկն առողջ պէտք է, քարողիչն անկախ,  
Դատաւորը ապահովուած առանց վախ.  
Փորը կուշտ, կեանքն առողջ և սիրտըն ուրախ,  
Այդպէս մարդն է խեղճին միշտ մսիթարող:

1898



**Մ**արմինդ մերկ, երեսդ պաղ խեղճ պառաւ աղքատութիւն։  
Ման ես գալիս աշխարհի մէջ անհալաւ, աղքատութիւն։  
Հայր Ադամ երբ դրախտից զրկուեցաւ, դու ծնար,  
Խելացիները կոչեցին քեղի ցաւ, աղքատութիւն։

Մայրդ մեռնէր երկունքի մէջ, քեզ չը ծնէր երանի,  
Կեանքի ցեց, կեանքի կերիչ, ժանդ, մարդադաւ աղքատու-  
թիւն։  
Շատ շատերին աղքատ ու մերկ զրկում ես այն աշխարհը,  
Շատերին էլ դու թազում ես անկտաւ, աղքատութիւն։

Ամենաազնիւ մարդիկը քո ձեռքիցը, գարշելի,  
Դառնում են ստոր, յետ ընկած, անիրաւ աղքատութիւն։  
Մարդիկ խորշում են քեզանից, պատիւ չունիս ոչ մի տեղ,  
Ես քու ո՞ր արարքդ գովեմ, ինչդ է լաւ, աղքատութիւն։

Հայրդ չիքն է, մայրդ սովը, մեծ պապդ ծուլութիւնը,  
Զախորդութեան տաք սիրահար, դու ծարաւ աղքատութիւն։  
Վերջապէս Զիւանուն էլ աշխատեցար առար մէջդ,  
Խորասուզուած, անառադաստ, կոտրած նաւ աղքատու-  
թիւն։

1891



**Մ**էկը իւր մեռելը կուլայ,  
Մէկը պատկուի, կը խնդայ,  
Մի ուրիշը պար կը խաղայ,  
Այսպէս է աշխարհի բանը։

Մէկը աւտելուց կը ճաքի,  
Մէկը անօթի կը մեռնի,  
Մէկը յուսով նոր կը ծնի,  
Այսպէս է աշխարհի բանը։

Մէկը բարձրանում է վերև,  
Մէկը գլորւում է ներքեւ,  
Մէկը խելօք, միւսը խեւ,  
Այսպէս է աշխարհի բանը։

Կան շատ մարդիկ, յիմարաբար,  
Հոր կը փորեն միմեանց համար,  
Ոչը գայլ է, ո՞րը ոչխար,  
Այսպէս է աշխարհի բանը։

Այսօրուայ մարդը ունեոր,  
Վաղը կը դառնայ չքաւոր,  
Անբախտը յանկարծ բախտաւոր,  
Այսպէս է աշխարհի բանը։

Զիւան, ամեն մորդ կը տեսնի,  
Աշխարհը սանդուխտէ բախտի  
Ուը կենէ, որը կիջնի,  
Այսպէս է աշխարհի բանը։

1901

Անգույթ Դարուինը ծնաւ փոխեց մարդկութեան պատը  
Գործին ուրիշ ձև տուեց, թուլացաւ սուրբ հաւատը.  
Նոր համոզմունք հնարեց, հին համոզմունքը ջրեց.  
Նախնիքներից մեղ թողած աւանդութիւնը ցրեց.  
Ողջ աշխարհը ման եկաւ, ամեն մի բան քրքրեց,  
Իրան խելքով, կարծիքով, գտաւ հիմքը, հաստատը։  
  
Բնագէտ գիտնականը այսպէս կարծիք է յայտնում—  
Իբր մարդը կենդանուց սերուել, առել է ծագում—  
Հմուտ աստուածաբանը չի սիրել այդպէս ուսում,  
Սուրբ գրոց հակառակ է, այդ միաքը չէ ընդունում.  
Երկրագործ գասակարգը վաղուց փորձեր է անում,  
Բնաւ յասմիկ չի լինում, ջոկ ցեղ է կթաւատը։

Կասեն շատ գիտունները կը վնասուեն խելքերից,  
Ինչպէս երբեմն ծովը դուրս է գալիս ափերից.  
Չամաշելով մարդցեղի արարչակերպ պատկերից,  
Փոխան բարձրացնելու, ցած կը բերեն եթերից.  
Միտք պղտորող, սիրտ կոտրող, ափեղցիք գրքերից,  
Գերադաս է ինձ համար պապիս տուած խրատը։

Զիւան, ոսկին ոսկի է, չի լինի ցինկ, յաղճապակ.  
Ոչ էլ Սիբիրու քարը Սէլյան կղզու փայլունակ.  
Մարդու մէջը հոգի կայ, աներեւոյթ մի էակ,  
Անմեռ, անմահ, մշտապէս լուսեղէն երկնաբնակ.  
Ով որ կուզէ թող լինի օրանդուտանի զաւակ,  
Ես Աղամայ թոռնիկն եմ և նորա հարազատը։

1902

\* \*

Կամ պիտի շատ փող ունենաս, կամ շատ լինիս գեղեցիկ,  
Կամ պիտի շատ ոյժ ունենաս, կամ շնորհը չնաշխարհիկ.  
Թանգագին ընտիր կտորից պէտք է հանդերձդ լինի.  
Պատիւդ կաւելանայ շրջանի մէջ տամնապատիկ։

Եթէ դորանց գոնէ մէկը դու չունենաս, թշուառ ես.  
Քանի ողջ ես աշխարհի մէջ, պիտի ապրիս աղքատիկ,  
Փողի ու գեղեցկութեան շնորհը ու ոյժի տեղակ,  
Բայց թէ չունիս առողջութիւն, թշուառ ես, չես երջանիկ։

1900

ՃԵՐ ՓԲԸՆԸՆԸ

Աստուած չանէ մարդուն ապիկար ծեր ժամանակը,  
Խոկոյն կը լինի նա ցաւագար, ծեր ժամանակը,  
Թէ չունի սատար, կամ թէ զաւակ, ծեր ժամանակը,  
Պէտք է գեղեցի անմիթար, ծեր ժամանակը.  
Տքնի պիտի ապրուստի համար ծեր ժամանակը,  
Ընկնի ակամայից սար ու քար, ծեր ժամանակը։

Դժուար է ծերին ճանապարհը՝ եթէ մոլորուեց,  
Գտնել չի կարող ուղղութիւնը, միաքը ցնորուեց,  
Աղքատ ծերունին սայթաքելով ոտքը խոտորուեց,  
Գայթակղութեան վիճը մտաւ, խիզը խմորուեց.

Երջանկութիւնից թշուառութեան մէջ թէ դլորուեց,  
Կը դառնայ յատուկ կաթուածահար ծեր ժամանակը:

Մարդը քանի որ պատանի է, փոքրահասակ է,  
Եռանդը վառ է, արիւնը շատ, սիրտը կրակ է.

Պատուով թէ ուժով երիտասարդ, անձը դանակ է.  
Սիրով կը տանի որքան էլ ծանր բեռի տակ է.

Հասակն առածի կարծում եռ բախտի դուռը փակ է,  
Պէտք է գթացող և բարերար՝ ծեր ժամանակը:

Երբ ծերանում է գրողը, դառնում է խաղաղ ծով.  
Փոքրիկ նաւակը իւր վրայից կանցնի ապահով.

Թէ ունի բարեկամ իրան դառնում է չադադով.  
Թէ չունի, բնական է՝ տունը պէտք է տիրէ ոով.


Էլ նա չի կարող բան յօրինել վառվուն հոգով,  
Նրա գրիչը կառնի դադար ծեր ժամանակը:

Մարդը միակերպ չի մնալ, փոխում է շարունակ,  
Յաջողը ծախորդ կը լինի, ձախորդըն յաջողակ.

Մշակը տանուտէր կը լինի, տանտէրը մշակ,  
Կեանքը խաբուտիկ պատկեր է, ծաղը է նշաւակ.

Թէ պիտի ունենայ Զիւանը եղկելի վիճակ,  
Աստուած իմ, արա համբերատար ծեր ժամանակը:

1892



## ՕՏԵՐԵՎԵՆԻ ԶԳԱՅՅՈՒԹԻՒՆԸ

Զաւակի և գերգաստանի տէր մարդը,  
Օտար երկրում բարեկենցաղ չի լինի.  
Երբ որ կը հեռանայ որդեսէր մարդը,  
Կը տիրի, երեսում ծիծաղ չի լինի.

32

Պանդուխտ ազբատ մարդուն կոտրած է թեր,  
Կարծես թառամել է կենաց տերեւը.  
Ամպի տակից դուրս չի դալիս արեւը,  
Խեղճի լոյսը անշամանդաղ չի լինի:

Աւելորդ է գերդաստանի տէր մարդուն,  
Հեռու տեղ գնալը թողած տեղ ու տուն.  
Ցերեկը անհանգիստ, գիշերն առանց քուն,  
Ամենեին մի օր խաղաղ չի լինի:

Զիւան, պանդուխտ մարդն է ալեկոծեալ ծով,  
Բախտ է, թէ որ մի օր մնայ անխուսվ.  
Չնչին առարկայից կառնուի շուտով,  
Երբէք նրա սրտի հետ խաղ չի լինի:

1884



## ՅՆՈԹԻ ՄՅՐԻԴԻ

Պէտք աղօթք է անում, ոչ ուրախութիւն,  
Առանց գործ, անսուաղ, անօթի մարդը.  
Թէ քիչ էլ ունեցաւ մտավախութիւն,  
Կը մահանայ շատ վաղ, անօթի մարդը:

Թէ անունդ չը դտաւ՝ մինչ անդամ ժիրը  
Թողնէ ու կը փախչի տունը, երկիրը.  
Ամեն բանից բարձր է հացի խնդիրը,  
Կը փնտրէ անյապաղ անօթի մարդը:

33

3

Քաղցածը չի գիտեր կրօն, սէր, հաւատ,  
Ոչչհայրենիք, ոչ ազդ և ոչ հարազատ.  
Որս է փնտրում քաղցած գայլին համեմատ,  
Կլիքառնայ մէկ ճիւաղ անօթի մարդը:

Քաղցածը թէ չունի ուտելու մէկ բան,  
Կլիքառնայ գիշատիչ, կատաղի գաղան.  
Ստամոքսը հանդիսա չի տալ մէկ վայրկեան,  
Դու չես տեսնիլ խաղաղ, անօթի մարդը:  
Զիւանի, քաղցածը թէ որ օտար է,  
Օտար երկրում բոլորովին տկար է.  
Քարից կակուղ ինչ էլ որ տաս, յօժար է,  
Չի ջոկիլ տաք ու պաղ անօթի մարդը:

1897

ԽՄ ԳԱՏԵՐԿՈՒԹԻՒՆԸ

Պատարկ եկայ, դատարկ կերթամ աշխարհից,  
Բան չը բերի՝ որ բան տանիմ իմ հետո.  
Ես էլ կը ընթանամ այն ճանապարհից,  
Որտեղից որ անց է կացել իմ դէտու:

Կարծես իբրև ստուեր ես աշխարհ եկայ,  
Օրերս անցան, ես մի բանի պէտք չեկայ.  
Որսորդ եղայ, որսի երես չը տեսայ.  
Չը դիպաւ նշանին, խոտորուեց նետու:

Զիւան, բան չը տեսայ բացի զրկանքից.  
Ընկճուեցայ մարդ ընկերի տանջանքից,  
Ես ինչ պիտի շահուեմ անցաւոր կեանքից,  
Քանի որ չէ շահուել իմ մեծ վարպետու:

1898

ՄԻԿՆ ՈՒ ՄԻԿԸ

Մ արդկանց արարքը տեսնելով,  
Խանդարուած կարդը տեսնելով,  
Նրանց գէշ վարքը տեսնելով,  
Թէ գիտուն ես, շուտ կը մաշուիս,  
Խեղագար ես՝ վնաս չունի:

Անգութ, անզգայ է աշխարհ,  
Մարդիկ իրար ջարդող և չար.  
Խեղճն է հողերուն հաւասար.  
Զգայուն ես, շուտ կը մաշուիս,  
Խոկ թէ քար ես՝ վնաս չունի:

Հեղեղն ելել է ահազին,  
Քարուքանդ է անում չորսդին.  
Կործանում է տունը ազգին,  
Իմաստուն ես, շուտ կը մաշուիս,  
Թէ յիմար ես՝ վնաս չունի:

Տես եղբարցդ օրը, Զիւան,  
Ման են գալիս թափառական.  
Քաղցած ու մերկ կիսակենդան,  
Թէ արթուն ես, շուտ կը մաշուիս,  
Թէ տիմար ես՝ վնաս չունի:

1896



«ԱՊՐԻԼ ԿԵԶ ԱՐԺԵԹ ի, ԱՊՐԻԼ ԿԵԶ ԵՐԿԵԹ է»

Մարդ կայ զարդարուած է ոսկով, արծաթով,  
Մարդ կայ՝ որ կաշիէ քամար էլ չունի.  
Մարդ կայ ուրախութիւն կանէ շաբաթով,  
Մարդ կայ՝ որ մի աւուր պաշար էլ չունի։

Հաւասարութիւն, բան, չի լինի, սուտ է։  
Որքան որ աշխատին, զուր, անօգուտ է։  
Մարդ կայ իշխան-ձուկը տապակած կուտէ,  
Մարդ կայ՝ որ աւելուկ բանջար էլ չունի։

Ճիշտ է որ ասում են աշխարհում բախտ կայ.  
Որին կը հանդիպի, որին թոյլ կուտայ.  
Մարդ կայ հանդիստ նստած բաժինը կուդայ,  
Մարդ կայ դիշեր ցերեկ դատար էլ չունի։

Զիւանի, անբախտի օրն է միշտ խաւար,  
Բախտաւորը ունի յաջող ճանապարհ.  
Մարդ կայ որ հօտերուն չըկայ թիւ համար,  
Մարդ կայ՝ որ մէկ նիհար ոչխար էլ չունի։

1895



ԱՅ Խ Ա Յ Հ

Տրտմութեան օթևան, ոգոյ տուն աշխարհ,  
Քո մէջդ ոչ մի մարդ անցաւ չի մնայ.  
Լացով, հարցս նման ընկայ ճանապարհ.  
Ցաւերդ գգուեցի, երբ մօրից ծնայ։

Քո փառքերդ չնվնի, պարգևներդ սուտ,  
Կրկին կը պահանջես ստացողից շուտ.  
Երբէք մի մարդ քեզնից չի քաղեր օդուտ,  
Ցաւով կը ծնանի, ցաւով կը դնայ։

Փրկիչդ խաչեցիր ով անհարազատ,  
Մլթէ մարդ քեզ նորէն կընծայէ հաւատ.  
Զիւանս քեզանից տրտմութիւնից զատ,  
Թէ իրաւն ասեմ, ես ոչինչ սնայ։

1874


ԵՐԳԸՆԴԿ ՄԵՐԹԻԿ

Խաղաղ, առանց ցաւի, երջանիկ մարդիկ  
Գտնել կուզես, գերեզմանոցը գնա.  
Մարդիկը թշուառ են, չըկայ երջանիկ.  
Կուզես քաղաք, կուզես ամրոցը գնա։

Մարդիկ առհասարակ թշուառական են。  
Լոկ ապրուստի համար, ինչ ասես կանեն,  
Մէկ ծայր հացի համար, իրար կսպանեն,  
Տանից դուրս ել դու մէկ փողոցը գնա:

Ով ջիւանի, դու մի ամիս գալուն ես.  
Զգա, շուտով կանցնիս, թէ որ արթուն ես.  
Կը յարդեն, կը պատուեն, քանի սիրուն ես,  
Երբ ծերանաս, գրողի ծոցը գնա:

1886



## Դ. ՄԱՍ

### ԱՇՈՒՂԻ ԽՐԱՑԸ

Բարոյական, քարոզ. Խլախոյս, յորդոր. յոյս, քաղաքար—  
կոչ.—Հառաստ յաջողութեան: Եգրակացողինա:



## ԽՐԱՑ ՀՆԿԵՐԻՍ

Իմ ձախորդութեանս մի խնդայ, ընկեր,  
Քեզ էլ կը պատահի այս բանը մէկ օր.  
Դու վարը կը նստիս, ինձ կը կանչեն վեր,  
Բախտերս կը փոխէ շրջանը մէկ օր։

Փողի վերայ յայս մի գներ յաւիտեան.  
Մտնի ու դուրս կուգայ շատ մարդու գրպան.  
Բախտի բերմամբ ծառան կը լինի իշխան,  
Իսկ ծառայ կը դառնայ իշխանը մէկ օր։

Փնտրես ու չես դժնիլ մի խեղճ աւանակ,  
Քու զարդարուած նժոյդ ձիուդ փախանակ,  
Ամեն անդամ ձիդ չի տանի մրցանակ,  
Ուրիշին կը մնայ մէյտանը մէկ օր։

Քու ընկեր Զիւանուդ խօսքերը միշտ լուր,  
Առաքինութիւնը պինդ բռնէ ամուր,  
Մեռնելիս կը դառնաս հողին կերակուր,  
Մտնելով ու մահի ուռկանը մէկ օր։

1897

Վակուղ փուշը ձեռ չի ծակիլ, աղիւն կառնէ կամացուկ.  
Խաղաղ ջուրը ձայն չի հանիլ, մարդ կը խեղտէ միշտ ծածուկ.  
Հաշող շունը ձայն է տալիս որ գալիս է քեզ վերայ.  
Դու այն գամբուից երկիւղ կրէ՝ որ չի հանել ձայն ու ձուք:

Առաւօտուն թէ ամպերը կարմրած չեն՝ վախ չը կայ.  
Հորիզօնը սե էլ լինի, այն օրը անձրև չի գայ.  
Թէ սագերը գրդուած չեն, կարկուտից մի վախենայ.  
Հազարաւոր տարիներուց փորձըւած բան է յատուկ:

Ստախօսը երդուել գիտէ, գողը կեղծ արդարանալ,  
Քամոտ ամպի բնութիւնն է առանց անձրև որոտալ.  
Լիք կարասը լուռ կը մնայ, ամենեին ձայն չի տալ,  
Զանգակի պէս զողանչում է՝ ուր որ կայ գատարկ պուտուկ:

Երկու երեսանի մարդը, ֆիւանի, սրուած քար է.  
Երկու սէր մէկ սրտի մէջ պահելը անհնար է,  
Երկու մեծ գործ մէկի ձեռքով կառավարել դժուար է.  
Մի ձեռքում չի տեղաւորուի երկու մեծկակ ձմերուկ:

1899



Եթէ մարդը մարդուն բարի կամենայ,  
Ոչ կոփւ կը լինի, ոչ աղքատութիւն.  
Բնութեան մէջ երբէք վատութիւն չըկայ,  
Մարդիկ իրանք են ստեղծում վատութիւն:

Թէ մարդասէր լինի ամեն գիտնական,  
Ուղին կը հարթուի ըոլոր մարդկութեան.  
Ողջ իմաստունները թէ խելք խելքի տան,  
Ամեն ցաւ կը գտնի շուտ փարատութիւն:

Այսօր թէ ուղենան մարդասէրները,  
Մէջտեղից կը վերնայ գոռ գիշակերը.  
Եթէ համաձայնեն բարի ազգերը,  
Ամեն խեղճ ազդ կստանայ ազատութիւն:

Նախանձը մարդկութեան համար չարիք է,  
Մէրը պաշտելի է, կենաց կարիք է,  
Կամեցողութիւնը մի մեծ բարիք է,  
Կը սփոէ աշխարհին յորդ առատութիւն:

Ճանապարհ խանգարող ժայռ քարը հանուի,  
Սիրոյ արտերու մէջ որո՞մ չը ցանուի,  
Արդարութեան ձայնը թէ չը խափանուի,  
Չի պատահի տրտունջ, յուսահատութիւն:

Սուրբ հոգու փոխարէն չարը վատհամբաւ,  
Տարածեց աշխարհի վրայ մահ ու ցաւ.  
Նրա համար մարդկանց կեանքը կարճացաւ,  
Չըկայ առաջուոյ պէս արեշատութիւն:

Թէ հիմնուի միջազգային դատարան,  
Առանց կոիւ վէճերը կը վերջանան.  
Թէ ազգերը իրարու եղբայրանան,  
Նոր կը շինուի հիմնաւոր հաստատութիւն։

Ինչքան մշուշապատ լինի մեծ սարը,  
Զուրը չի կորցնիլ իւր ճանապարհը.  
Դետինը չի մնալ շինութեան քարը,  
Եթէ լինի անկեղծ գնահատութիւն։

Բարեգործութիւնն է կեանքի մեծ սիւնը,  
Եռացնող մարդկանց ոիրտն ու արիւնը.  
Աշխարհներ կը շինէ ողորմութիւնը,  
Հարուստները թէ չանեն ժլատութիւն։

Զիւանի, ազգերուն Տէրը տար նոր կեանք,  
Պատերազմը համարէին ամօթանը.  
Աշխարհը կոտանար ուրիշ կերպարանք,  
Կունենար դրախտի համեմատութիւն։

1899

### ԽՈՍՈՎԸՆՈՒԹԻՒՆ

Վեղութիւն քաշելս, այլոց նեղութիւն տալուց ծագեց.  
Չափազանց իմ խոնարհուելս, հապարտ մանդալուց ծագեց.  
Գիտես թէ իսկապէս մէկը փոխեց սիրուն օրերս լաւ,  
Հիմիկուան իմ լաց ու սուգը, առաջուան ինդալուց ծագեց։

44

Առանց մտածելու նրա խորութիւնը, մտայ չուրը։  
Խորասուզ լինելս ծովում, յիմար լողալուց ծագեց.  
Տկար խեղանդամի դիմացը կանգնելով տնազ արի,  
Այժմ հաստատ կաղալս, կեզծ ոտով կաղալուց ծագեց։

Զէր անցնում մտքից անգամ թէ աշխարհը նեղութիւն կայ.  
Լոելս, խեղճանալս, մեծ, գոռող խօսալուց ծագեց.  
Զիւանի, անուսում մարդու խաւար է մտքի աշխարհը,  
Յետադիմութիւնս կարծեմ տղէտ մնալուց ծագեց։

1898

### Բ Կ Ե Ր

Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը՝ մարդուն  
Փայլեցնում է արեի պէս պատկերը մարդուն.  
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր,  
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն։

Կեանքդ նուիրես ընկերի լաւին, քիչ է գարձեալ,  
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.  
Ընկեր եմ ասում, Աստուածավախ, ճշմարիտ ընկեր,  
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն։

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը,  
Կարիչ, հարազատ ընկերն է սուսերը մարդուն.  
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան աշըզ.  
Զի սպիտակեր ամենեին մէկ հերը մարդուն։

1874

Ամեն չոմերոս մէկ ջոիլոս ունի.  
Ամեն Մովսէս՝ մէկ հատ փարաւոն ուժեղ.  
Ամեն կոկորդիլոս մէկ հիլոս ունի,  
Ամեն գեղեցկուհի՝ մէկ կոպիտ տգեղ:

Ամեն երգող Դաւիթ մէկ Սաւուզ ունի,  
Ամեն ծառ էլ դառն, խակ պտուղ ունի.  
Ամեն հոյակապ տուն մէկ հատ խուզ ունի,  
Ամեն բարոյախօս՝ մէկ ափեղցիեղ:

Արեգակի դէմն էլ սեմութ ամպեր կան,  
Սոխակն էլ աղուաւին ունի ախոյեան.  
Օձն էլ ոզնու ձեռքից միշտ լաց ու կական  
Անելով մեռնում է անճար ու անդեղ:

Նաւ չըկայ որ թաթառից չը վախենայ,  
Ծով չըկայ որ կոհակ ալիք չունենայ.  
Բարձր սարի դլիին միշտ ձիւն կը տեղայ,  
Մեծ մարդկանց կը դիմուի հարուածը զօրեղ:

Ամեն Զիւան ունի մէկ ծեր դիմադիր.  
Առանց երկրաշարժի չըկայ մի երկիր.  
Աև ունի իւր դէմը ամենայն կարմիր,  
Փոխան ուրախութեան սուզն է բռնում տեղ:

1896

Չախուրդ օրերը ձմրայ նման կուգան ու կերթան.  
Վհատելու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.  
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար.  
Որպէս յաճախորդ՝ շարուեշարան կուգան ու կերթան:

Փորձա՞զ, հալածանք և նեղութիւն աղդերի գլխից,  
Խնչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան.  
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
Ոլքան մանուշակ, վարդ, բալառան կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարձենայ, ոչ ակարը տիրի,  
Փոփոխակի անցքեր զանազան, կուգան ու կերթան.  
Արեր առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական, կուգան ու կերթան.  
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, մարդիկը հիւր են,  
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան:

1892




Ու սարին դիմեցի, վերան ձիւն եկաւ,  
Որ ծառը բռնեցի՝ պրծաւ արժատից.  
Որ մեծին խնդրեցի, ինձի տէր չեղաւ,  
Որին սուրբ կարծեցի, դարձաւ հաւատից։

Լալով, հզօրների դուռը բաղխեցի,  
Ինձ տկարիս պաշտպանութիւն խնդրեցի.  
Որ հարուստին խեղճութիւնս յայտնեցի,  
Ասաւ վաղուց ձանձրացել ենք աղքատից։

—Այլոց խաղաղ կեանքը զուր մի խանդարել,  
Ուժեղը տկարին չի մխիթարել,  
Ով ոյժ չունի, նա չի կարող կեանք վարել—  
Այս խօսքերը լսեցի ես շատ շատից։

Հաւաքեցի ես ոյժերս ինձ վերայ,  
Կրկին ես ինձաննվ սփոփանք գտայ.  
Տեսայ որ օտարից բնաւ յոյս չոկայ.  
Դարձեալ ես հանեցի փուշը իմ մատից։

Զիւան, պապիդ տունը մնացած հնուց,  
Նորոգուած կը տեսնես այսօր կամ եդուց։  
Արել կը ծագէ վիրաւոր մարդուց,  
Լոյս կը ծնի արիւնլուց ճակատից։



Երբ որ Աստուած կամենայ տալ մեր ազգին բարի կեանք,  
Կուտայ առաջ մեր հայոց հարուստներն իղձմտանք.  
Մեր ազգի հարուստները անտարբեր են, յիրաւի,  
Հաղարէն մէկ՝ հայրենեաց համար նրանք չեն ցաւի.  
Չեն մտածեր թէ ունին եղբարք քաղցած ծարաւի,  
Նրանց մէջը շատ չը կայ խղճի նշոյլ, գորովանք։

Աշխարհի մէջ միշտ այս է ամենազարմանալին.  
Հարուստների ձեռքումն է ազգի բախտի բանալին.  
Դէմքը այսպէս է բերել, ոս է անիմանալին,  
Սորանցից պիտի յուռայ բարեր թշուառ խղճալին.  
Վարուիլ նրանց հետ սկրով, այս է յատուկ ցանկալին,  
Մինչև նրանց որդիքը ստանան լաւ հրահանդ։

Այնուհետև կը բացուի բախտի դուռը համարձակ,  
Ամեն մարդու բաղձանաց համեմատ առհասարակ.  
Նրանք կը դառնան բոլոր ժողովրդին օրինակ,  
Ամենը իւր քսակից դնելով չոկ հանդանակ,  
Կը սկսուի յաջողուիլ գործը այսպէս շարունակ.  
Պարտքերը ճանաչելով, ել չեն սիրեր աղաչանք։

Կազմում է բացառութիւն առատասիրտ իշխանը,  
Ամեն բարի գործի մէջ ցոյց տալով իւր նշանը.  
Բաց է ամեն ժամանակ նրա շտեմարանը,  
Այնպէս մարդը կստանայ արժանի գովասանը.  
Եւ աղքատաց համար էլ պատրաստ է միշտ սեղանը,  
Վարձը վերնուստ կստանայ՝ որքան կը չարչարանք։

Աստուած ամենաբարին ամեն մէկին հաւասար,  
Ստեղծել է աշխարհի մէջը ապրելու համար.  
Բայց ինչուց է մինն ազքատ, մինը ունի մեծ գումար,  
Սա բախտ է թէ գիտութիւն, արի կազմէ գաղափար.  
Ես Զիւանի երգիչս մտածում եմ անդադար,  
Հարստութիւն գտնելու հարկաւոր է աշխատանք:

1880

Գ Ի Ւ Բ Ն Ի

**Ս**արդկային ցեղի սկիզբը, վախճանը Աստուած գիտէ.  
Լայնածաւալ տիեզերքի սահմանը Աստուած գիտէ.  
Գիտնականները բնաւ եղակացութեան չեն հասել.  
Աներևոյթ գերբնական խորանը Աստուած գիտէ:

Եինոզք ինքն է իմանում իւր շինածի գաղտնիքը,  
Թեփի մէջ է խելահաս գիտուններու նոր կարծիքը.  
Ուրտեղ է մաքուր որբերու, արդարոց հայրենիքը,  
Պահուած է, մարդ չգիտէ սուրբ կայանը Աստուած գիտէ:

Որդին՝ հօրը, թոռը՝ պապի իրաւունքն է պաշտպանում,  
Բնական է, որ զաւակը մօր պէս է արտասանում:  
Ամենայն ազգ ինքը իրան ուղղափառ է անուանում,  
Մինչ չը մեռնի չի յայտնուի, այդ բանը Աստուած գիտէ:

1902

Ե. ՄԱՍ

ԱԶՆԻԻ ՍԵՐԼ

Սեր իսկական եւ անկեղծ, աշուղը եւ սիրունին: Խրատ  
հայ աղջկան. գովեստ հայ օրիորդին: Ամուսնական  
իեւանը:



## ՍԻՐՈԽՆԻԿ

Աքուր նազելի կոյս, տեսքդ վառվուռն—  
Ծաղիկներն են տուել, թէ աստղերը քեզ.  
Հայրըդ է պարգևել, թէ մայրդ սիրուն,  
Սյու կրակոտ, փայտոն, սև աչքերը քեզ:  
  
Կուրծքդ ելբրուսի սպիտակ ձիւն է,  
Արիւնդ իշխանի մաքուր արիւն է.  
Դա մի չնաշխարհիկ հարստութիւն է,  
Փառքի կը հասցնէ քո պատկերը քեզ:

Դու Զիւանու հարսնացուն ես, ով քոյրիկ.  
Միթէ պիտի դասնաս ուրիշին հարսիկ.  
Մրցում են իրար հետ քու մասին, աղջիկ.  
Աշխատում են տիրել օտարները քեզ:

1902



**Վ**ազելոյս ամպէ իջել արեւի պէս վառ երեսին.  
Սգւորի պէս սև շղարշէ ծածկել պայծառ երեսին.  
Աչքերի և ունքերի սկսութիւնը չէր բաւական,  
Որ նորից մուժ քողէ առել կոյսը կայտառ երեսին:

Կաթնաբուղիս բերանը փակ, աչքերն արդէն դալկացած,  
Խաւարը գիշերի պէս պատելէ պատկառ երեսին.  
Մէկ տարի կայ, չեմ դիտեր, հիւանդէ, ինչ է տիրուհիս,  
Կտրելէ, վերացելէ ժախտը իսպառ երեսին:

Մարտը գարուն գիտնալով զգոյշ չը պահեց ինքնիրան,  
Գոյնը որ թօթափելէ, ցուրտըն է պատճառ երեսին,  
Տապալեց յոյսդ օդապարիկի նման, Զիւանի,  
Հարսւից յանկարծ փշեց ահռելի թաթառ երեսին:

1885

ԳԵՂԵՑԻ ՈՒՀՈՒՆ

**Շ**առաղոյն վարդ այտերդ ինձոր են գրախտային.  
Համեստ վարքդ տեսնողը քեզ չի կարծեր հողածին.  
Նրան այնպէս կը թուայ, հրեշտակ ես երկնային.  
Ո՞վ կարողէ չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Հիւանդը կառողանայ պատկերիդ մտիկ տալով,  
Ծաղկունք բարե կը բռնեն, երբ տեսնեն քեզ ման գալով.  
Թռչունները դէմ կուգան, երգելով, պար խաղալով,  
Ո՞վ կարողէ չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Հոգեբուխը բերանիցդ կենդա ութիւն կը բուրէ.  
Կեանք տուող, սնունդ տուող կազդուրիչ կերակուր է.  
Պոունկներիդ կաթիլը անմահութեան սուրբ ջուրէնէ,  
Ո՞վ կարողէ չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Քեզ սիրում եմ սուրբ սիշով, պիտի սիրեմ, գեղեցիկ,  
Այս թէ դուն էլ ինձ սիրես, ես կը լինեմ երջանիկ.  
Ատամներդ մարգարիդ, շրթունքդ ակ մեղեսիկ,  
Ո՞վ կարողէ չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Բոլոր մարգիկ եղբայր են քեզ համար, Համեստ սիրուն.  
Դու խտրութիւն չը գիտես, չես ջոկել ազգ ու անուն.  
Սիրոյ վճիտ պարզ ջուրը և աղբիւրը գնան ես, դուն,  
Ո՞վ կարողէ չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

1899

ԿԵՌԵՐՈՒ ՀԱՐԵՄԱՑՑՈՒԹԻՒՆ

**Ո**ւ քու աչք ու ունքդ սև են, ով չքնաղ,  
ես էլ դորանց դէմը բախտ ունիմ շատ սև՝  
Թերթիչներդ թէ լսիդ տան շամանդաղ,  
իմ արես ամպամած է, հաստատ սև,

Եթէ դու սիրում ես միշտ ուրախութիւն,  
Ես էլ կուղեմ առանձնանալ մի անկիւն.  
Թէ որ դու կուրծք ունիս որպէս ճերմակ ձիւն,  
Իմ էլ մազերուս մէջ չըկայ մէկ հատ սև:

Դու փայլում ես սոկոյ, արծաթի նման,  
Իմ էլ կեանքս է ժանգոտ երկաթի նման.  
Թէ դու մազեր ունիս սև սաթի նման,  
Ես էլ օրեր ունիմ անցնելու վատ, սև:

1886

### ԵՐԵՒԱՑԵԼՆ ԳԻՄ ԱԲԻ

**Ո**ւ պիտի դաս, ով սիրելի, երեկոյեան դէմ արի.  
Շատ մի ուշանալ նազելի, երեկոյեան դէմ արի.  
Յերեկը փակուիր սենեակում, մի երեար ոչ ոքի,  
Շատ շատերուն չես հաճելի, երեկոյեան դէմ արի:  
Արել նախանձելով այրել կուզէ քու պատկերդ,  
Զգուշացիր, երանելի, երեկոյեան դէմ արի.  
Ես ու դու, Աստուած միայն զիտնանք պիտի մեր գաղտնիքը,  
Էլ չեմ ասում քեզ աւելի, երեկոյեան դէմ արի:

Դիշերը հանգիստ խաղաղ նստենք մի տեղ զրոյց անենք.  
Իմ գեղեցիկ, իմ գովելի, երեկոյեան դէմ արի.  
Շոգերին դուրս է դալիս իւր բնիցը վատ սողունը,  
Թունաւոր օձը դարշելի. երեկոյեան դէմ արի:

Թող օդը քիչ մեղմանայ, քաղցր զեփիւոը թող փչէ,  
Բարձրապատիւ երեելի երեկոյեան դէմ արի.  
Տարածէ բազուկներդ՝ եղբօրդ՝ Զիւանու վզով,  
Սպիտակ շուշան փարելի, երեկոյեան դէմ արի:

1898

### ԱԲ ԱԲՐՈՒՀԻՆ

**Յ**օժար եմ, ինչ որ կուզէ թող անէ իմ սիրականս.  
Մարմինս սուր սուսերով թող կտրատէ աննմանս,  
Ինձի սպանելու կամք է ունեցել գովականս,  
Գնալով կաղաչեմ, վիզս ձգելով պատանս:

Դու միայն քու ծամերը, սիրուն, արա ինձ կախաղան,  
Ես կը քաշեմ, թագուհի, իմ ձեռքերով իմ պարանս,  
Աչքիս արտասուքի նման աչքէս ելաւ աշխարհը,  
Բացի Աստուած չէ կարող ոչ ոք լինիլ օգնականս:

Զի իմանալ եթէ մտնեմ մրջիւնի աչքումը ես,  
Այնքան որ բարակացել, նիհարացել է իրանս.  
Ես գինետան անկիւնը չեմ փոփոխել աշխարհի հետ,  
Ժլատի շինծու գրախտից լաւ է իմ կեցարանս:

1886



### Ա Ի Ւ Ե Լ Ի

**Ա**րքայութիւնը առանց քեզ՝ տարտարոս է ինձ համար.  
Բայց քու հետդ գժողբումն էլ լինիմ, փառք է ինձ համար.  
Երեսիցդ լոյս կը կաթէ, հոգիս, ամեն առաւոտ,  
Խոկուհի, ճերմակ ճակատդ արեելք է ինձ համար:

57

Իմ անուշիկ, առանց քեզի աշխարհը աւեր է ինձ.  
Ուրիշի խօսքը զրոյցը, վերք բացող սուսեր է ինձ.  
Երբ դու չը կաս աչքիս առաջ, ցերեկը գիշեր է ինձ,  
Երկնային պայծառ արեւը շուտ կը մթնէ ինձ համար:

Քեզանով հոդի են առնում հարսանիքն ու նշանը,  
Սոխակի պէս ճտվալով զարդարում ես սեղանը.  
Քանի որ դու չես երևում, տիսուր է խրախճանը,  
Քաղցր երդ ու նուադարան վատ կը հնչէ ինձ համար:

1901

—ՀՕԶ—

### ԲԵՐԵՄԸՆԴԹԱԹԻՒԹԻՒՆ

Անուշիկ կոյս, բարի բախտի քու արժան լինելդ տեսնեմ.  
Հոտաւէտ ծլած ու ծաղկած բուրաստան լինելդ տեսնեմ.  
Բարով Աստուած կամենայ փափագիդ հասնիս, սիրուն աղջիկ,  
Բոլոր չքնաղներու մէջ զարմանազան լինելդ տեսնեմ:

Սիրածդ փեսայի թեին թեւդ տաս օդնելու մտքով,  
Համեստ, առաքինի, տնտես, ժրաշան լինելդ տեսնեմ.  
Դրացուդ փարթամութեան վրայ երբէք դու չը նախանձիս,  
Ամենայն ժամ վիճակէդ դոհ, բաւական մնալդ տեսնեմ:

Սիրես պէտք է քու ընկերդ, քու անձիդ պէս Տիրոջ կամքով.  
Շարունակ նրան հսկող քաջ պահապան լինելդ տեսնեմ.  
Կաղաչեմ Զիւանս, Աստուած, քիչ արև պարգևէ ինձի,  
Չը մեռնիմ ես սիրուն դստրիկ, վարդ շուշան լինելդ տեսնեմ:

1899

ԳԵՂԵՑԿՈՒՅՑ

Արեկից ես ծնել, թէ լուսնիակից,  
Որ այդքան չընալ ես, նազելի աղջիկ,  
Վարդից ես հոտ առել, թէ մանուշակից,  
Կամ թէ վարդի շաղ ես, նազելի աղջիկ:

Դիմացդ յաւերժահարսներ պարում են,  
Դափնեայ պսակներով քեզ զարդարում են.  
Սրեն ու լուսինը մերթ խաւարում են,  
Դու անշամանդաղ ես, նազելի աղջիկ:

Ինչքան տիսուր լինի քեզ տեսնող մարդը,  
Յաջողակ կը դառնայ անյաջող մարդը.  
Կուրախանայ մօտդ հանդիպող մարդը,  
Շատ գեղածիծաղ ես, նազելի աղջիկ:

Զիւանին կեանք կառնէ թուլս ունքերիցդ,  
Նայելով չի յագեր քու պատկերիցդ.  
Ամպած ժամանակդ բոց աչքերիցդ,  
Մարդարիտ կը մազես, նազելի աղջիկ:  
1900



## ԳԵՂ ԸՆԼԻՒԹԻ ՄՈՏ

(«Խոռվ սու բաքրնտայշի եղանակով»)

Պաղ աղբիւրի մօտը կանդնած մի աղջիկ,  
Զեռին սափոր, լցրած ջուրն էր անուշիկ.  
Աչք ու ունքը զարմով քաշած, գեղեցիկ.

Մայրիկ, զարնուեցայ սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտը, պարտիզում նստած,  
Ունէին լաւ գինի, գառի խորոված.  
Երգում էին, պարում էին բոլորած,

Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ման էր գալիս ընկերներով միասին,  
Կարծես հրեշտակ էր, չէր նու հողածին.

Մազերը ոսկեգոյն, ճակատը լուսին.  
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Յերեկը անդադար նորան եմ յիշում,  
Դիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում.  
Տոշորուած ման կուգա՞մ խեղճ, մոլոր, տրտում.  
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ա՛յս երանի այն աւուր, շատ երանի,  
Տեսութեանը կրկին լինիմ արժանի.  
Առանց նրան ես չեմ մնար կենդանի,  
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

1883

## ԳԵՂ ԷՆՑԻՐԻ

Հրդէն գոյացաւ աչքերիցդ, ով սիրուն աղջիկ,  
Այրեց ու լափեց իմ իրանս, հայկազուն աղջիկ.  
Համեստ ու բարի ծաղկափթիթ սրբասուն աղջիկ,  
Աշխոյժ, գեղեցիկ, սիրտ գրաւող զգայուն աղջիկ:

Երանի նրան, ով քու գրախտիդ մէջը կապրի,  
Զմեռ է թէ գարուն՝ ոչ կը շոգի, ոչ էլ կը մրսի.  
Խենթ ճգնաւորը թող գնայ սարերումը ճգնի,  
Թող զրկըուի քու տեսութիւնից, մեծանուն աղջիկ:

Դրկէ, օրիորդ, քու նկարդ մարդիկը տեսնեն,  
Թող խնդրէ ձեռդ աղաչելով իշխանի որդին,  
Բովից, քուրայից գուրս եկած ես, ոսկի ես անդին,  
Ենորհըի առատ ընծաներով զարդարուն աղջիկ:

Իմաստուհի կոյս, հոգեալարար տեսք ունիս հաստատ,  
Սիրոյդ կրակին չեն դիմանալ երկաթ ու պողպատ,  
Հարուստը դէմի դառնում է հեք, խղճալի աղքատ,  
Այնքան ուժեղ ես, բարոյապէս, վառվուուն աղջիկ:

Նախնիք քեզ համար սրբութիւնը թողել են օժիտ,  
վատդ ուզողը վայրախօս է, անմիտ է, անմիտ,  
կոյս անտառի մէջ հիանալի, տենչալի հովիտ,  
կանաչ, նորահաս, մատաղաշիթ, դալարուն աղջիկ:

Է՞ր չես երեսում, որտեղ ես դու նազելի այծեամ,  
Մերթ չես առաքում կամ մի նամակ, կամ սիրոյ պատգամ,  
Երդիչ Զիւանուն էլ չես յիշում, մոռցեր ես անդամ,  
Չմեռ կենացս կեանք նուիրող նոր գարուն աղջիկ:

1900

## ՍԱԻՐԻ ԱԿՐԻ

Անբաժան է, մինչի մահ կաշկանդել է ինձ սուրբ սէրը,  
Խռապէս Անահիտը պարգեել է ինձ սուրբ սէրը.  
Երկաթէ շղթայ լինէր մեր կապը՝ հիմայ կտրել էր,  
Ոսկի շղթայից ամուր կապկապել է ինձ սուրբ սէրը:

Յոփութեան կղզիներում Աստղիկ, կալիպսէ տեսնելու,  
Չէ թողել, Մենտորի պէս արգելել է ինձ սուրբ սէրը.  
Ավրոդիտեան բանակը երբ արշաւել է ինձ վերայ,  
Միշտ ազդարար ու պահապան եղել է ինձ սուրբ սէրը:

Ամեն մէկը երկնային ասող ու լուսին են ինձ համար,  
Վեց հատիկ ընտիր աղաւնեակ տուել է ինձ սուրբ սէրը.  
Հոգեկան զուարձութիւն, բերկանք տարով միշտ Զիւանուն,  
Ամեն անդամ, ամենայն ժամ աղդել է ինձ սուրբ սէրը:

1895

## ՀՈԳՈՒ ՀԵՏՈՒ

(Փոխադրութիւն քուրքերենից)

Երբեմն հոգուս հատորը կուլ տալիս նեկտարի ջուր,  
Նուաղած աչքերովը ինձ նայում է խեղճ ու տխուր.  
Բոցանիչ թերթիմերը որպէս ոլաք, երկասյրի սուր,  
Բաց ու խուփ արած միջոցին կարծում ես թափում է հուր:

Սիրոյ սուրբ վերմակի տակը ննջում է գովականս,  
Լոէ, բըլբուլիկ սիրուն, թող քիչ քնի անհմանս,  
Կայծահան վառ աչքերից շանթ կարձակէ սիրականս,  
Բաց ու խուփ արած միջոցին կարծում ես թափում է հուր:

Իսկապէս սիրականիս անշէջ կրակ են աչքերը,  
Կայծն ու բոցը գագարում են, քանի փակ են աչքերը,  
Երբ ուրախ է հոգեակս, ատրճանակ են աչքերը,  
Բաց ու խուփ արած միջոցին կարծում ես թափում է հուր:

1902

## ԱԶՔԵՐԻ

Տարժեցին սառած իրանս վառ հրաբուխ աչքերդ,  
Այրեցին երակներս, դուրս հանեցին ծուխ աչքերդ,  
Ես կուղէի տշխարհը թողնել ու դնալ անապատ,  
Մէկ հայեացքով ուղղութիւնս փոխեցին թուխ աչքերդ:

Քո որսկան թերթիչներդ ոլաք ու գնդակ արձակող,  
Հոլանի բազուկներդ մահատու նիղակ արձակող,  
Երկու հրեղէն վիշապ են շանթ ու կայծակ արձակող,  
Դարձրել են շատերին սև գոյնի ածուխ աչքերդ:

Բացի մէկից՝ Զիւանը բնաւ ուրիշին չէ սիրել,  
Թառամած ժամանակս դու ուզում ես ինձ էլ սիրել,  
Հոգեհան ակնարկներդ բազում տներ են աւերել,  
Զոհել են շատ հարկաւոր պիտանի գլուխ աչքերդ:

1903



### ԴՅԱՅ ԵՅ ՀՅՄԱՅ

Փառք Արարչին, ցնծութեան առուակը գտայ ես հիմայ,  
Սիրտ բացող, աշխոյժ տուող երդակը գտայ ես հիմայ,  
Սրբութեան սեղանի մօտ բազմած սիրունի ձեռքումը,  
Երկնային գինով լեցուն բաժակը գտայ ես հիմայ:

Խաւարից ազատուելով լուսաւորութեան հիւր եղայ,  
Սրբելով աչքերից արտասուքս, ուրախացայ,  
Դտնելով մէկ ժամանակ հոգեակիս հետ առանձնացայ,  
Տենչալի աւետաբեր խօսնակը գտայ ես հիմայ:

Կարծեմ դրախտումն էլ չըկայ անթառամ վարդ այս  
տեսակ,  
Կրծքին աստղեր ունի իջած և ճակատին արեգակ.  
Անուտել, առանց խմել գէմքին նայում եմ շարունակ,  
Սպիտակ կաթնանման լուսնեակը գտայ ես հիմայ:

1898

### Զ. ՄՈ.Ս

#### ԶԻՒԱՆԻՆ ՄԵՆԱԿ

Մեր նրգիչը եւ իւր ջութակը.—Արս աշխարհահայեցու-  
դութիւնը եւ դառանանքը.—Էնդինակը իւր հոգույ աշ-  
խարհում—Արս անձնականը—հոգս ու նեղութիւն. գան-  
գաւու. տրոտունչինը:

Ե Բ Կ Ի Պ

Փու մէջդ ես մի քայլ հողի մաս չունիմ,  
Ո՞վ դու լայնածաւալ, ընդարձակ երկիր.  
Ի՞նչ եմ արել ես քեզ, մեղքս ի՞նչ է իմ,  
Չես տուել մէկ խրճիթ, մէկ տնակ երկիր:

Պապս էլ համ չէ առել քու սկզբունքից,  
Թոյն է ծորել քու բերանից, շրթունքից.  
Զրկել ես մարդկային սուրբ իրաւունքից,  
Համարում ես դու ինձ խորթ զաւակ, երկիր:

Վարուիր Զիւանու հետ մի քիչ մայրաբար,  
Քեզնից ոչ դաշտ կուզեմ, ոչ ձոր և ոչ սար,  
Գոնէ մի փոսիկ տուր աճիւնիս համար,  
Ծածկըւեմ պատովս հողիդ տակ երկիր:

1900

Ա Մ Պ Կ Բ

Տիրատեսիլ, սեաթոյր, խաւար ամպեր հեռացէք,  
Մոքիս արեսի համար ինդրեմ ճանապարհ բացէք.  
Իմ հոգուս հորիզօնը թողէք, հեռու գնացէք,  
Հիմայ էլ մէկ ուրիշի բախտի վրայ սղացէք:

Ես արդէն սդաւոր եմ, չունիմ ուրախ օր ու ժամ,  
Դրախտից զրկվել եմ, խաբուել եմ ինչպէս Աղամ.  
Բաւ է կարկտահարէք արտօ անտէր, անխնամ,  
Գնացէք մի ուրիշ տեղ, բարկացէք, գուգոռացէք:

Եմ գլուխս չէ Մասիս և ոչ ելքըրուս սարը,  
Որ հարթել էք դէպի ինձ ձեր ուղին, ճանապարհը,  
Անցկացրի ձեր անջուր հովանու տակ կէս դարը,  
Էլ ոյժ չունիմ տանելու, ափսոսացէք, խղճացէք:

1901

### ՊԾՐԱՊ ՄՆԵԼՈՒՑ ԼՍԻ Ի

Պիտի դովեմ մայր հողը, քամին, ջուրը անձրել,  
Պիտի յիշեմ աստղերը, լուսնիակը, արևը.  
Նկարագրեմ պիտի սարեր, ձորեր, դաշտ անկեղծ,  
Որ իմ դատաւորիս մօտ ներկայանամ բանաստեղծ:

Սեսպիտակ ամպերը բամպակի քուլի նման,  
Պիտի գղեմ անեղով, դուրս բերեմ թել ու գերձան.  
Պիտի գործեմ լաւ դուլպայ, պաճիճներ խայտաբղետ,  
Ինքնակոչ քննադատո որ ճանաչէ ինձ պօէտ:

Նազելի կոյս աղջկան պիտի շատ գովարանեմ,  
Աչքերուն ու ունքերուն լոյս ու կամար անուանեմ.  
Անունս էլ պիտի փոխեմ ու դնեմ նոր չոմերոս,  
Որ տեսնի քննիչս, ճանաչէ պըմբետիկոս:

68

Միտք շատ պէտք չէ երգի մէջ, բառերը առատ լինին,  
Դրուատել պէտք է յատուկ սիրունը, սէրը, գինին.  
Խրատ, բարոյական երգ համարւում են հին զգեստ,  
Պարզ բառեր գործածողը չի համարուիլ գնդարուեստ:

1901

### Ի Մ Ե Բ Գ Բ

Պանդխտութեան մէջ լրացաւ իմ երեսուն ամեակս,  
Ինձանից գեռ չէ հեռացել հաւատարիմ ջութակս.  
Քառասունիինսի մէջը մտաւ արդէն հասակս,  
Գնում եմ դէպի ծերութիւն, բարձրանում է վիճակս.  
Հետզհետէ մազերուս մէջ շատանում է ճերմակս,  
Սկսում է նսեմանալ լուսատու աշտանակս:

Քննում եմ իմ անցեալս, աեւնում եմ ես անկատար,  
Իմ թողած հետքս վաղանցուկ, ծաղկի պէս թոյլ ու տկար.  
Մանկութիւնից մինչև այսօր բոնել եմ մէկ ճանապարհ,  
Հետեւել եմ իմ արուեստիս, նուագել եմ ես քնար.  
Նշանաւոր, օդտաւէտ գործ չեմ թողել ազգիս համար,  
Մի քանի հատ չոր ու ցամաք երգեր է յիշատակս:

Թանկադին, անդառնալի թարմութիւնս անցաւ գնաց,  
Ոչ մի օգուտ չունեցայ, խոստովանեմ բացէ ի բաց.  
Հանգամանքից չօգտուեցի, չեղայ ես շրջահայեաց.  
Առաւոտեան բացուիլը բուժ աքլորս չարաւ իմաց.  
Իմ մտաւոր աշխարհի մեծ բաժինը խաւար մնաց,  
Խաւարած ու ամպի տակից դուրս չելաւ արեգակս:

69

Բնութեան գաղտնիքը մութէ, ծովի անդունդից խոր է,  
Ընկնողը դուրս չի գալիս, վիճ է, անատակ հոր է.  
Աշխարհը անփոփոխ է, լուսնիակը հին ու նոր է,  
Մէկը անբախտացել է նոր, միւսը բախտաւոր է,  
Չէի կարծում և մտածում ամենը անցաւոր է,  
Ժանդուած պղինձ կը դառնայ ոսկի է ժամանակա

Ես Զիւանս ամենին աղաչել եմ, պաղատել եմ,  
Որ լինին սիրով միաբան, մէջս այսպէս դատել եմ.  
Ինչ տեղում ատելութեան հոգու ծնունդ նկատել եմ,  
Պատճառին առանց վախի, յանդիմանել, նախատել եմ.  
Ինչքան իմ ոյժս պատել է, այնքանով աշխատել եմ,  
Ժողովրդին մի օդուտ տալ՝ եղել է նպատակաւ

1895



## ԶԵՄ ՍԻՒԵՐ

Ես կուզեմ ճշմարտութիւն, սխալ գաղափար չեմ սիրեր.  
Ուզդութեան կեանըս կուտամ, խաբերայ համճար չեմ սիրեր.  
Եմ խելացս ոյժի չափ որքան կարող եմ՝ կաշխատեմ,  
Ակներե ես տգէտ եմ, բայց՝ կրկն յիմար չեմ սիրեր:

Բնդհանուր մարդկութիւնը, պատուիրած է սիրել մեզի,  
Պարզապէս, այլազգերը իմոյս հաւասար չեմ սիրեր.  
Մամնաւոր լոյսի ճաշակ առած կը համարեմ հոգիս,  
Վասն այն ազգեցութեան ներհակ է, խաւար չեմ սիրեր:

Ազգութեան, հայ ազգութեան իբր մի անդան էլ ես եմ,  
Ազգի չափ համարէն թէ՝ յակիրթ ու գոհար չեմ սիրեր.

Միութեան կապը խզող իմաստունը անդէտ է միշտ,  
Այնպէսը իմաստակ է, խելքից է տկար, չեմ սիրեր:

Ընկերին նախանձելով միաս տուող մարդը յատուկ,  
Աստուծոյ թշնամին է, և նա է թելիար՝ չեմ սիրեր.  
Ես հայոց ռամիկներուն միսիթարող մի երգիչ եմ,  
Իմ քնարիս պէս խօսող ըլինի քնար՝ չեմ սիրեր:

Հայ տղայ, հայոց սիրուն աղջիկներհն սիրտ ընծայէ.  
Այլազանց աղջիկներուն սիրող սիրահար չեմ սիրեր.  
Ես Զիւանի երգիչն եմ գիտուններուն գովեստ տըւող,  
Եւ նորանցից առնելով՝ անդէտ խելագաղ չեմ սիրեր.

1870

## ԽԵՂԱՆՔԸ

Ունիմ, փառք Աստուծոյ, մամնաւոր ապրուստ,  
Ես իմ վիճակիցս անբաւական չեմ.  
Կը հագնիմ միակերպ, հասարակ հագուստ,  
Աստիճանս ցածր է, ես խոր իշխան չեմ:

Զափաւորութիւնը կը տեսնեմ արժան,  
Այն մարդոցը՝ որոնք են ինձի նման,  
Թէկ վարձով է, իմս չէ սեփական,  
Բայց ես նորէն գոհ եմ, անօթևան չեմ:

Դեռ ես շատ բանի մէջ միամիտ եմ,  
Ունիմ կաշուտութիւն, ուսման կը դիտեմ.  
Երգիչ եմ հայերէն, տաճկերէն գիտեմ,  
Այս է գիտութիւնս, ուսումնական չեմ:

Զիւանս համացայ բանի հիմք նոր,  
Աւազ ժամանակս անցկացաւ բոլոր.  
Ուսում չը գիտնալուս ես չեմ յանցաւոր,  
Հայրը է պարտական, ես պարտական չեմ:

1871

ԱՅ ԲԱԺԻՆԻ

Ենորհաց կենսատու ծառի հովանու տակ հայ մուսան,  
Կենաց գինի, հաց էր տալիս կազմելով մի ճոխ սեղան.  
Երաժիշտներ ու երգիչներ, բանաստեղծներ բազմազան,  
Երջապատած սուրբ սեղանը կերպէին երդ օրհնութեան.  
Դա մի երկնային հանդէս էր, հիապանչ տեսարան,  
Գեղարուեստի սիրահարներ համախմբուած միաբան:

Գեղեցիկներից գեղեցիկ հայոց մուսան երկնածին,  
Իւր տաղանդից բաժին հանեց և նուիրեց ամենին.  
Յաւերժահարսները բերին անմահական սուրբ գինին,  
Ով որ խմեց ստացաւ կեանք, փոփոխուեց բոլորովին.  
Որը ոսկէ քնար առաւ, որը գրիչ թանդադին,  
Որը յայտնի երգիչ եղաւ, որը ճարտար վիպասան:

Ես Զիւանս չը լսեցի, հանդէսին շատ ուշ հասայ,  
Մարդիկը ողջ ցրուել էին, ոչ մի ծանօթ չը դասայ,  
Սուրբ ծառի հովանու տակի սեղանի մօտ կանդ առայ,  
Դուցէ մի բան կը նուիրէր, հայ մուսային չը տեսայ,  
Նոյն սեղանի վրայի փշանքներից մի քիչ կերայ,  
Նրա համար խեղճ մնացի բան շունեցայ հիմնական:

1900

ԱՅ ԶԷԿԱՅ ՄԷԿԻ

Ո՞ւմ համար կը մաշուխս, անբախտ հեղինակ,  
Դու քու ազգիդ համար կաս, չըկաս՝ մէկ է:  
Իրենը սիրելու նա չէ ընդունակ,  
Կուզես եզիր հանձար, կաս, չըկաս՝ մէկ է:

Հայի համար այլոց սարեակը սագ է,  
Իւր սագը իւր աչքին մէկ հաւի ձագ է,  
Հայ երաժիշտ, ինչ կամենաս նուագէ,  
Նա կուզէ սազանդար, կաս, չըկաս՝ մէկ է:

Զիւան, թնաւրք լինէիր սիրուն հագնըւած.  
Հայ ազգը չէ սիրում հային երգասաց.  
Հայ աշուղ ես, պիտի մեռնիս դու քաղցած  
Իբրև աղքատ Պաղար կաս՝ չըկաս — մէկ է:



ԱՅ ԱՂՋ

Անթե թոշնիկ է աշուղը...  
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ.  
Դարձող ճախրիկ է աշուղը,  
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:


Մերթ անսուաղ ծարաւ, պապակ,  
Մերթ անյաջող, մերթ յաջողակ,  
Թափառում է նա շարունակ,  
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ։

Մի տեսակ լուսատըաիկ է,  
Լուր տարածող մունետիկ է.  
Հողմից հալածուած ամպիկ է,  
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ։

Զուր յոյսերով խարխափում է,  
Գեղեր քաղաքներ չափում է,  
Կայծակի նման խփում է,  
Այսօր այստեղ վաղը այլ տեղ։

Զիւան, մի տեղ դադար չունի,  
Մեղուի պէս միշտ կը թռչկոտի.  
Այս ընթացքով պիտի մեռնի,  
Այսօր այստեղ, վաղը այլ տեղ։

1902



### ԵՍ ԵՒ ԵՐԿԻՒՆՔԸ

▶ **Բ**անչ ես քիթդ կախել ու տրտմել երկինք,  
Իմ սիրս քեզանից ամպստ է այսօր.  
Դու ձիւն-անձրե ես թափում, ես արիւն-քրտինք,  
Իմ գէմքս քու դէմքից մթուտ է այսօր։  
  
Քու արեգ է ամպերու տակ տառապում,  
Իմ էլ հոգիս հոգսերու մէջ ճնշըւում.  
Քու կայծահան ամպերդ չեն որոտում;  
Իմ էլ գործո կազ է, անոտ է այսօր։

74

Դու մայիսն ես յիշում, գարնան սիրահար.  
Ես էլ մտածում եմ հայրենեացս համար.  
Եթէ քու օրումդ արեգ է խաւար,  
Իմ էլ հոգիս տիսուր, ժանդուտ է այսօր։

Եթէ դու աստղերու համար կը հոգաս,  
Ես էլ որդիք ունիմ վեց հատ նորահաս.  
Եթէ դու ցուրտ ձմրան ձեռքիցը կուլաս,  
Զիւանին էլ նոյն պէս խոցուտ է այսօր։

1900

### ԳԻՒՆԻ

▶ **Պ**նչն համար ինձ բանտի մէջ արգելում են զուր տեղ,  
Ի՞նչ եմ արել, Տէր իմ Աստուած, ինչ է արգեօք իմ մեղը.  
Դեռ մանուկ հասակումս զրկուել եմ հայրենիքից,  
Նրա կարօաը քաշելով հալուել է սրտիս եղը։

▶ **Փ**շոտ է, քարքարոստ է ճշմարտութեան ճանապարհը,  
Բայց կարող է անցկենալ առանց վնասի արդարը.  
Թող նորից ծաղկի զօրանայ Վասպուրական աշխարհը,  
Վառպահէ անմահ Սրարիչ հայրենիքիս կանթեղը։  
  
▶ **Տ**էր, մի թողնիլ տարագիր Զիւանու բախտի դուռը փակ,  
Ազատէ ինձ, հերիք է մնամ խաւարի լծի տակ.  
Երկնային Բժշկապետ, բարձրեալ բարերար սուրբ էակ  
Աղաջում եմ հասցրու հիւանդ հոգուս ճարն ու գեղը։

1902



75

ԳՈՀՈՒՆԱԿԱՐԻԹՅԻՆ

Փառք Քեղի Բարերար, փառք Քեղի Աստուած  
Որ բերիր հասցըիր այս աւուր ինձի.  
Պէտք է ես աղօթեմ միշտ բազկատարած  
Որ չը թողիր արտում և տխուր ինձի:

Քեղ ինդրեցի կատարեցիր փափաղս,  
Օդնութիւնդ քաղցրացրուց վիճակս.  
Կրկին դու ինձ նուիրեցիր զաւակս,  
Պարգևեցիր աշխարհն ընդհանուր ինձի:

Գոհ եմ ես քեզանից Աստուած պետական,  
Ամենայն ըսպէ, ամենայն վայրկեան.  
Նորոգեցիր կեանքս արծըուի նման,  
Յանձնեցիր նոր թներ, ոոր փետուր ինձի:

Զը տուիր Զիւանուն, Տէր իմ, սրտի ցաւ,  
Ոչ էլ հոգի մաշող տխրալի համբաւ.  
Կեանքս զուարթացաւ, հոգիս զօրացաւ,  
Երբ որ ուղարկեցիր բարի լուր ինձի:

1898



Է. ՄԱՍ

ԱՐՏԱԲՈՒԽՈՂ ԽՆԴԻՐ ԵԽ ՆՈՒԷՐ

Աղօթք, մնայթամք,—ուղերձ, ձօն, Անրքող. քաջալերսկան  
գովեստ. Սկովիամք—ողբ, դամբանական. տապանագիր:

Ա Ղ Յ Թ Փ

Երեսանկեալ աղաչում եմ, Տէր Աստուած,  
Նախանձոտ, վատ հարեանից փրկէ ինձ.  
Անկիրթ, ամբարտաւան, լիրը, աներկիւղած,  
Անունով մարդ, գործով շանից փրկէ ինձ:  
Ո՞հ չեմ յանկալ լիրը բերանից նախատուիլ,  
Նրա տուած զերքը շուտ չի փարատուիլ,  
Սրջից, գայլից կարելի է աղատուիլ,  
Անդուսպ, հարբած մարդ-գաղանից փրկէ ինձ:

Զիւանի, չարերը, նեռ օրինազանց,  
Մարդ բռնելու համար պատրաստում են յանց.  
Քսու, մատնիչ, Յուդայի պէս վատ մարդկանց  
Աներևոյթ մութ դարանից փրկէ ինձ:

1900

Ա Ղ Յ Թ Փ

Ո՞վ ամենակարող Արարիչ, Աստուած,  
Խնդրում եմ, ինձ մաքի կարողութիւն տուր.  
Աղերսում եմ, խնդրում միշտ՝ բազկատարած,  
Տուր ինձ, հոգու սնունդ, կենաց կերակուր:

Ով արքայից արքայ, անվերջ նախագահ,  
Տուր ինձ կարողութիւն, չը մնամ անշահ.  
Բացի Քեզնից ես ում դիմեմ, ով անմահ,  
Որ լինի առանց մեղ, ամենամաքուր:

Զիւանն եմ, փափագող միշտ անբիծ հոգուդ,  
Միտքս լուսոյ կարօտ, շատ բան ինձի մուժ.  
Ուրախացուր սիրտս, ով առատագութ  
Մի թողներ թշուառիո միշտ մնալ ախուր:

1873

### ՀԱՅՆԵՐՈՐԴԻ ԳԱՐԵՄԹՈՒԽԻՆ

**Բ**ոլործաղկոցները բացուին, գեղեցիկ վարդարան դառնան.  
Աղատ երգեն սոխակները, ծառերը երգարան դառնան.  
Խոպան այդիները ծաղկեն, նորոգուած տեսարան դառնան.  
Ցամաքած ձորերը կրկին ջրերու աւաղան դառնան.  
Հարազատ տէրերը իրանց հողերուն պահապան դառնան.  
Սարերն ու դաշտերը մէկ-մէկ հացի շտեմարան դառնան.

Վերին գերբնական Զեռքովը նորոգուի հին տունը շատ շուտ.  
Փառաւորուի, բաղմի այնտեղ թագուհի սիրունը շատ շուտ.  
Տարածուի աշխարհէ աշխարհ հատընտիր անունը շատ շուտ.  
Զմեռը վերջանայ, կորչի, ժամանէ դարունը շատ շուտ.  
Շուտով ծիծեռնակը հասնի նորոգէ իւր բունը շատ շուտ,  
Կանաչ կարմիր ու սպիտակ սարերը ողջ վրան դառնան:

Դու փայլուն քսաներորդ գար, արի գարնան աւետիք տուր,  
Նորածին փարելի մանուկ, գեղեցկադէմ, քաջադանդուր,

80

Մօրդ պէս մի լինիր անգութ, տկարին անօգուտ, իզուր,  
Չորացած, ծաբաւի ծաղկանց խղճա, շուտով սրսկէ ջուր,  
Տարածէ ամենային երկիր բարի համբաւ, աւետեաց լուր,  
Մարդասէր գործերդ շատ տեղ քեզանից թող նշան դառնան:

Արի խաղաղութեան հոգի, կռիւները վերանան թող,  
Իրանց գործած սխալները մարդիկ զարթնին, իմանան թող,  
Տկարները մեծ ոյժ կազմեն, իրարու հետ միանան թող.  
Ուղիղ ճամբով գէպի առաջ շարունակեն ու գնան թող,  
Լուսամիտ մարդասէր մարդիկ օրսոտորէ զօրանան թող.  
Նոցախօսք ու քարոզները տարածուեն պատուիրան դառնան:

Ամենային մի տառապեալ մարդ թող հանդիսու օթևան դտնի,  
Հողաշատ աշխարհի մէջը իրան պատսպարան դտնի,  
Առանց գործ մեռած է մարդը, լաւ է հանգստարան դտնի,  
Ապրել ուզող, ցանկացողը մտածէ գործ ու բան դտնի,  
Զիւան մեր հին բուրաստանը մի հմուտ բուսաբան դտնի,  
Հրաշքով վշերը փոխուեն, նորոգ վարդ ու շուշան դառնան:

1901

### ՄԱՅՐԻԿ


**Պ**ուխտակ շամամներդ դրախտ ծոցիդ մէջ,  
Կաթնաղբիւր են եղել ինձ համար, մայրիկ.  
Տարրակի պէս շատ եմ արել ելեէջ,  
Կրծքիդ վրայ մաքուր, սուրբ տաճար, մայրիկ։  
  
Ինձ համար հոյակապ կազմդ ես մաշել,  
Հրճուել, ուրախացել, վրաս ես աշել,  
Մինչեւ մեծանալս ինչեր ես քաշել,  
Մնացել ես անքուն, անդադար, մայրիկ։

81

Փոխարէնը ես քեզ ոչինչ չեմ արել,  
Մօտդ չեմ մնացել, չեմ միմիթարել,  
Քու սուրբ պատուէրներդ ճիշտ չեմ կատարել,  
Թողեր՝ եմ իղձերդ անկատար, մայրիկ:

Զիւանին եմ, սխալմունքովզգում եմ,  
Ես քու հոգուդ համար միշտ աղօթում եմ.  
Ներիր քու մեղաւոր որդուդ, խնդրում եմ,  
Եղիր երկնքումը ինձ սատար, մայրիկ:

1899



### ՀԱՅԻ ԱԼԻԹՈՒՆԸ

(Թիֆլիսում յօքելեանի տօնախմբութեանը երգուած)

**Յ**իսուն տարի ծառայել է հայ ազգին,  
Անյաղթ քաջի նման հայր Ալիշանը.  
Նուիրել է հայոց՝ պտուղը գրչին,  
Բանաստեղծ, պատմաբան հայր Ալիշանը:

Արժէ որ նա ունի այգքան մեծ համբաւ,  
Հայոց լեզուին հագցրել է նոր հալաւ.  
Դարուս քերթողահայր Մովսէսն է իրաւ,  
Յարգելի գիտնական հայր Ալիշանը:

Գրականութեան մէջ մի մեծ հսկայ է,  
Ողջ ազգից յարգըւած մէկ արեղայ է,  
Ծիսով կաթոլիկ է, բայց հոգով հայ է,  
Միրում է Հայաստան հայր Ալիշանը:

82

Եւրոպայի մէջ մեծ պարծանքն է մեր.  
Թողել է հայ ազգին զանազան երկեր.  
Գրել է Այլրարասո, Ջիլակ, այլ գրքեր,  
Եւ գրել է Սիստուն հայր Ալիշանը:

Անկեղծ հայրենասէր, ժրաջան, արի,  
Լաւ ծնողաց զաւակ, ծնունդը բարի.  
Մաղթենք ևս ապրի մի քանի տարի,  
Թողնի մի այլ նշան, հայր Ալիշանը:

Նորա մեծ խելքից օգտուիր Զիւանի,  
Կենսատու գրքերից բազմակողմանի.  
Սիւնեաց պատմութիւնն էլ գրէր երանի,  
Զըմտած գերեզման, հայր Ալիշանը:

1889



### ՑԱԽԱԼԻ ՄԱՀ

**Վ**ենետիկի Սուրբ Ղազարու կղզին,  
Հեռագիրը մի լուր բերեց տիրագին.  
Հայոց ազգի համակրած այգին,  
Մի կաղնի ծառ մահը տապալեց գետին:

Ծերունազարդ, փառաւորուած, փառահեղ,  
Ճաճանչափայլ մի մեծ աստղ էր շատ գունեղ.  
Բազմավաստակ, բազմապտուղ, հանճարեղ,  
Մեռաւ հայոց նահապետը թանգադին:

83

Հայոց սարեր, դաշտեր, ձորեր ողբացէք,  
 Ձեր սոխակը մահացել է, սգացէք,  
 Հին հին վանքեր, առերակներ դուք լացէք,  
 Զըկայ Դեռնդ Ալիշանը մաքրածին:

Երկրորդ Մովսէս Խորենացին գիտնական,  
 Երկինք դնաց քաջ Եղիշէն պատմաբան.  
 Հիմքը խախտեց հայոց գրականութեան,  
 Ամուր կերտուած պատը բլաւ ազգային:

Համոզմունքով թէև պապին համակամ,  
 Ազգութիւնից չէր սաւնացել ոչ մի ժամ.  
 Հոգեղէնը՝ նրան մնաց անթառամ,  
 Թառամեցաւ նիւթեղէնը երկրային:

Ջիւան ուր է մեծ բանաստեղծ երգակը,  
 Խլեց մեղնից անդութ մահի գնտակը.  
 Թռաւ յաւէտ Աւարայրի խօսնակը,  
 Քեզ ով պիտի խօսեցնէ ով լուսին:

1901

ՆՈՒԻՐ ԲՅՈՒԿՈՒՄԻՍ  
 Պ. Աղամ Սարդարեանցին  
 ( Յօքելեանի տօնախմբութեանը )

Հաղարաւոր համակարողներուդ մէջ  
 Թող իմ ձայնս էլ խառնեմ, սիրելի Աղամ.  
 Զարդացած, գիտնական սիրողներուդ մէջ,  
 Դու ունիս մի հատ էլ աշուղ բարեկամ:

84

Գործունեայ, օդտաւէտ պիտանի մարդ ես,  
 Ազգիդ պատիւ բերող երիտասարդ ես.  
 Հայ բեմը զարդարող, կեանք տուող զարդ ես,  
 Քո գործերդ վկայում են ամեն ժամ:

Ապրիս, ժիր, եռանդոտ, գործունեայ մշակ,  
 Համեստ, անփառասէր, դու բազմավաստակ.  
 Քանի հայ բեմը կայ, սիրելի հոգեակ,  
 Յիշատակդ միշտ կը մնայ անթառամ:

Արեգ շատ լինի, քաջ Արեշատեան,  
 Վասպուրականի ճետ, Աղամ Սարդարեան.  
 Բացի այս չոր երգը չունիմ ուրիշ բան,  
 Ներող Եղիր, հոգիս, որ քեզ ընծայ տամ:

Ջիւանս, ինչքան էլ լինիմ բացակայ,  
 Հոգով ցնծութեանդ ներկայ եմ, ներկայ.  
 Ինչպէս կերակրին աղը համ կուտայ,  
 Այնպէս էլ հայ բեմին դու տալիս ես համ:

1900



ԳԵՄԸՆ ՔԵՐԻՊԱՅԻ ՄԵՀՈՒԵՆ ԱՌԻԹՈՒԼ

Ողբացէք, ով Արամեանք, ձեր բարձր մուսան չըկայ.  
 Հայերուս մեծ բանաստեղծ Գամառ-Թաթիպան չըկայ.  
 Մեր ազգի Հոմերոսը, աննման հոկան չըկայ.  
 Ուրախութեան լուր տուող, ցնծութեան վկան չըկայ.  
 Հայոց գրականութեան անդին շափիւղան չըկայ.  
 Աշխարհական վարդապետ, ընտիր արեղան չըկայ:

85

Հարազատ հայի զաւակ Ռափայէլ Պատկանեան,  
 իւր քնարի ձայնովը բաղում մարդիկ կեանք առան.  
 Չնաշխարհիկ բանաստեղծ, հոգի կրթող վիպասան,  
 Արդասաւոր գրիչը եռանդ տուող կայծահան.  
 Կոռւելով խաւարի դէմ մեռաւ հերոսի նման,  
 Աղիողորմ լալիս է նուարդը Արան չըկայ:

Մայր Արաքս երդի գրող հեղինակին ողբացէք,  
 Քաղցրահնչիւն, քաղցրախօս հայ սոխակին ողբացէք,  
 Մեր մտաւոր աշխարհի արեգակին ողբացէք.  
 Արփիափայլ, լուսատու աշտանակին ողբացէք,  
 Չունեցող համանման անդին ակին ողբացէք,  
 Տարաւ ձեր կոռնոսը՝ ազնիւ անթիքան չըկայ:

Թէ մտքով, թէ մարմընով յատուկ ծնող թանգարին,  
 ինն երեխայի հայր, նահապետ բոլորովին.  
 Լրիւ քառասուն տարի ծառայել է իւր աղդին.  
 Մի տեսակ ուղղութիւնով չէ փոխել գոյնը, հոգին.  
 Իւր բանաստեղծ պատերը, հայրը երկինք կանչեցին.  
 Հայ քերթողաց կաճառի հայրը և աբրան չըկայ:

Զիւան, ուր է երգիչը, բարութիւնը հոչակող.  
 Ճշմարտութեան ջատագով, ստութիւնը մարակող.  
 Իւր գրչի սուր շանթերով մոլիներին ապտակող,  
 Առանց վախի մարդկութեան ցեցերին խայտառակող,  
 Փողովդին յոյս տուող և ապագան գուշագող.  
 Հայերու մեծ մարդարէն, հայոց եղիան չըկայ:

1892



Ն Ո Ւ Է Բ  
Պ. Մովսէս Մակարիչին

Ծնորհաւոր քու տօնդ, պարսն Մովսէս Մակարիչ.  
 Շատ տարիներ հասցընի քեզ այս օրուան Աղարիչ.  
 Ուրախ, գուարթ, անվասո, ընկերներով միասին,  
 Հաւաքուիք, ուրախանաք այս յարկի տակ վերստին.  
 Թող սաւառնի ձեր մէջը սիրոյ տենչալի հոգին,  
 Ամեն անդամ այն հոգին ձեզ լինի միիթարիչ:

Խնդրում եմ Աստուածանից բայի վիճակ ունենաս.  
 Խիղճդ մաքիդ առաջնորդ և օրինակ ունենաս.  
 Կենակիցդ միշտ քեզ հետ, դու շարունակ ունենաս.  
 Կատարես յիսնամեակդ, ուկի պատկ ունենաս.  
 Իսահակին նմանող մի հատ զաւակ ունենաս,  
 Ծերութեանդ հասակում գործերուդ կառավարիչ:

Դարձել է նոր հայրենիք Ասմաւիրը քեզ համար.  
 Շատ ու քիչ վաստակ ունիս, գտել ես մի ճանապարհ.  
 Գոյութեան կոռուի մէջը ընթանում ես քաջաբար,  
 Երգի, նուագածութեան բնականից սիրահար,  
 Յատկութիւններուդ մասին տալու մի լու գաղափար,  
 Ես չեմ կարող, սիրելիս, պէտք է հմուտ նկարիչ:

Դու իմ առաջին ծանօթ, իմ առաջին բարեկամ,  
 Կրծանիսում պատահած յագելի հին բարեկամ,  
 Գիտեմ քու բայի սիրու և քու հոգին բարեկամ,  
 Տօնիցդ ինձ էլ հասաւ մաս ու բաժին բարեկամ,  
 Ընծայում է Զիւանին, ով թանգարին բարեկամ,  
 Այս մի քանի տող երգը քեզ համար շատ քիչ է քիչ:

1902

## Ն ՈՒ Խ Բ

Իմ մի ծանօթին



Պանքարաւոր ընկեր, ինձ մի նախանձիլ,  
Գոյութիւնս գաղափարիդ վնաս չէ.  
Դու քաղաքացի ես, ես գիւղական ծիլ,  
Եմ բանջարս քու հանճարիդ վնաս չէ:

Ես խըսիր եմ դործում, դու ընտիր դորգեր,  
Իզուր ես նեղանում ինձնից, մարդ-ընկեր.  
Ես եղներ եմ լծել, դու նժոյդ ձիեր,  
Սայլապանս կառավարիդ վնաս չէ:

Սրտով քեզ յարգում է, պատւում Զիւանին.  
Դու միամիտ եղիր, գնա քու բանին.  
Նա չի կարող հասնել այն աստիճանին,  
Խեղճ ըլուրս բարձր սարիդ վնաս չէ:

1902

## Ն ՈՒ Խ Բ

Մեծապատիւ Ղազարոս Աղայեանցին  
(Յօբելեանի տօնախմբութեանը)

Ա եծ բանաստեղծ, մեծ աշուղ, ժողովրդի սիրելին,  
Հայոց ազգի Բերանժէ, փայլուն շողակ թանկագին,  
Երախտաւոր ուսուցիչ, շատերուն հայր պատուական,  
Արգասաւոր գրչի տէր, ուղղախօս, լուսաբերան,

Բարձրահասակ, յաղթանդամ, կտրիչ սերունդ սիսական.  
Քաջ Ղազարոս Աղայեանց, հոյակալ մարդ ազգային:

Այնքան երկեր ես գրել, որ չունին թիւ ու համար,  
Համով, հոտով, գուրեկան, տղերը մարդարտաշար.  
Հեշտ չէ քառասուն տարի ճգնել, տքնել անդադար,  
Փարելի մանուկներուն ցոյց տալ ուղիղ ճանապարհ,  
Հայոց լեզուին զարկ տուող, հայրենիքի սիրահար,  
Վառ ու կենդանի պահող հայութեան թմրած հոգին:

Ապրիր, ով պիտանի մարդ, ապրիր, պտղատու ծառ ես,  
Անուշահամ պտղովդ մարդոց կեանք կը պատճառես.  
Քու աշխայժդ չէ մարել, դեռ հնոցի պէս վառ ես,  
Երիտասարդի նման ոյժդ տեղն է, կայտառ ես.  
Փայլուն մետաղից զուրկ ես, սրտով հարուստ պայծառ ես,  
Հայ գրողը երկնքում կատանայ առատ բաժին:

Շատ տաք ու պաղ քամիներ անցել են քու դլխովդ,  
Միշտ խաղաղ է մնացել, չէ ալեկոծուել ծովդ,  
Ինչ որ կուզես կը ցանկաս, տայ Աստուած քու սրտովդ,  
Ժիր երիտասարդ մնաս խելքովդ ու մաքովդ,  
Շատին օրինակ լինիս ազնիւ բարի հոգւովդ,  
Գործից թուլացածներուն կեանք պարդես վերստին:

Դու մտաւոր քաջ զինւոր, անվեհէր առաջախաղ,  
Լուսոյ մասին լուր տուող, աւետաբեր աքաղաղ,  
Կերպարանքդ գրաւիչ, պատկերդ գեղածիծաղ.  
Հոգեկան հորիզոնդ անթուխպ, առանց շամանդաղ,  
Կլմադ բարեխառն, ոչ տաք է և ոչ էլ պաղ,  
Փաղափարով, կարծիքով, ոչ շատ նոր ես, ոչ շատ հին:



**Ա**յսուհետև ինձի լոյս չէ հարկաւոր,  
Քանի որ քեզ ունիմ, իմ աղնիւ հոգեակ,  
աչերդ արեգակ.  
Թէ ունիմ ցնծութիւն, քեզ եմ պարտաւոր,  
Դու ես ինձի համար ամեն ժամանակ,  
կենդանի ջութակ:

Բախ լինելուս պատճառը քեզ եմ համարում,  
Որ տախիս ես սրտիս լարին ընդհարում,  
Քիչ կը ճարուի քեզի նման այս դարում,  
Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,  
սիրուն աղաւնեակ:

Այտերդ անթառամ պարտիզի ծաղիկ,  
Շրթունքդ շաքարից, մեղրից անուշիկ.  
Վերջապէս ինձ համար, ով իմ գեղեցիկ,  
Զկայ ողջ աշխարհը քեզի նմանակ,  
դուն ես միայնակ:

Քաղցրախօս թոչնիկներ անհամար, անթիւ,  
Անոյշ ձայնիդ համար քեզ կուտան պատիւ.  
Պատկերդ գրաւիչ անունդ աղնիւ,  
Դու առաւօտեան պայծառ արուսեակ,  
ուշիմ ընդունակ:

Մէրդ սուրբ է միշտ անարատ ինձ համար,  
Դուն համեստ ես, աւազ ես եմ անկատար.

Քեզ կը սիրեմ բոլոր կեանքիս հաւասար,  
Համոզմունքս է որպէս մաքուր պարզ վտակ,  
վճիտ, անապակ:

Է՞ր եմ տխուր արդեօք, քանի որ դու կաս,  
Քեզ ունեցող մարդը ի՞նչ ունի պակաս.  
Յուսամ Աստուած պիտի ապրիս անվաս,  
Զիւանիիս համար բախտով յաջողակ,  
սիրելի տատրակ:

1880

ՆԱԽԻՔ  
Իմ քոռ Լուսիկին

**Պ**րախտի տունկ, ինկի ծառ ես, Լուսաբեր,  
Անուշահոտ մէկ բուրգառ ես, Լուսաբեր.  
Ի՞նչ ասեմ քեզ, ի՞նչ անուն տամ, հոգեակս,  
Ուկուց ձուլուած գեղափայլ ես, Լուսաբեր:

Ծնողացդ նոր, անդրանիկ նպարը,  
Նրանց անգին մարդարիտը, գոհարը,  
Դու աստղերու աշխարհից ես վար իջել,  
Նրա համար շատ պայծառ ես, Լուսաբեր:

Դու Գալստեանց շառաւիղ ես, մատաղ կոյս,  
Ստեփանեան բուրաստանից նորաբոյս.  
Արաքս գետի ալիքներից գոյացած,  
Սիրոյ ծնունդ աշխոյժ գառ ես, Լուսաբեր:

Արարիչը քեզ մի եղբայր կամենայ,  
Հնկեր լինի, հետդ կարդայ ու խաղայ.  
Լինիս խելօք շնորհալի օրիորդ,  
Համեստ քողդ չը պատառես, լուսաբեր:

Զիւանուց էլ մի մաս ունիս անուշիկ,  
Լեռնեանց տան արենակից շատ մօտիկ,  
Սովորում ես մօրդ լեզուն խնդալով  
Թոթովելով կը բարբառես, լուսաբեր:

1902

### ԱՂՅԹՔ

Աստուած իմ, նոր հոգի տուր՝ թող զօրանան տկարները։  
Մեղսալից շրջանի մէջ չը ընկճռւին արդարները։  
Ընկած ու որբ ազգերուն, Տէր իմ պահապան գաղտնագէտ,  
Գայլերու ոհմակներուց ազատ պահէ ոչխարները։  
Կաղաշեմ ես, առ, Տէր իմ, անգութներուց զօրութիւնը։  
Թող չը ծաղրեն քու հօտդ ամբարտաւան յիմարները։  
Չորացած, փթած կոճի ստուերի տակ ապրելով,  
Բարձր ուղիղ նրբահասակ, ծառ չեն լինի դալարները։  
Զկնապանները, Տէր իմ, Քեղնից զօրութիւն առնելով,  
Անվեհեր հանճար եղան ուսում չառած անճարները։  
Փրկէ, Տէր, Քու հնաղանդ ծառաներդ անդունդներուց,  
Թող չը իշխեն լուսաւոր մարդկանց վրայ խաւարները։

1895

### Ը. ՄԱՍ

#### ԵՐԳԵՖՈՒՆՁ

Երդ ու տաղ, իսաղ ու պար, մանի, բայեւաթի. քեֆ,  
ուրախութիւն, խնջոյք, հարսանիք, գինի, կերուխում  
վարդ ու ծաղիկ: Բնութիւնը:



Երեք ձայն կայ շատ է սիրում ականջս,  
Ուկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն.  
Այդ երեքն են մշտական իմ պահանջս,  
Ուկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Չուրը կեանք է, ուկին զօրաւոր, յաղթող,  
Սիրունից կը լսես կենսատու ներբող.  
Արդեօք մարդ կայ այդ երեքը չը սիրող  
Ուկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

Գրպանդ ունենաս ուկով լի քսակ.  
Մօտդ մի չքնաղ կոյս, գիմացդ գետակ.  
Երեքին էլ լսես գիշեր ժամանակ,  
Ուկիի ձայն, սիրունի ձայն, ջրի ձայն:

1898



ՄԱՏՐՈՒՍԻ

Հոգիդ սիրեմ, մատրուակ, բեր, գինու որուակը բեր.  
Ածիր մի հատ, տուր խմեմ, թէյի մեծ բաժակը բեր.  
Ցանկանում եմ այս գիշեր մոռանալ հոգս ու ցաւը,  
Վրաստանի իշխանաց գինու ախորժակը բեր:

Դուն էլ արի մեր մօտը, համ խմենք, համ երգ ասենք.  
Թառը տուր քաջ ընկերիս, ինձ էլ իմ ջութակը բեր.  
Ընտիր դոհարներիցը կարդա լսենք, մատրուակ,  
Եռտովի, Սայեաթ-Նովայի երդերու տետրակը բեր:

Մի քանի շամփուր սիրուն, համով խորոված շնէ,  
Վառիր կրակարանը, շուտ արա, կրակը բեր.  
Կանաչ մանր վարունգներ եթէ կայ, տուր տասը հատ,  
Աղը և թարմ կանաչն, բողկուկը, դանակը բեր:

Կարմիր ու սպիտակ գինու շիշերը դարսիր վրան,  
Տուր մի սիրուն երեկոյթ դու սեղանտախտակը բեր.  
Գեղեցիկը, մատրուակ, աչքի համար լաւ է, լաւ,  
Կալիպսէի կղզիից վայելչահասակը բեր:

Թող ժլատը հոգս անէ, մտածէ սոկու համար,  
Իմ քսակի մէջ եղած դու բոլոր ստակը բեր.  
Բոլոր կերակուրներու թագուհի յանիրը, շուտ,  
Զիւանու սրտով սիրած յարդելի խորակը բեր:

1899



## ԼՈՒՌԻ

Հիւսիսից փչեց սառն հով,  
Պարզ երկինքը պատեց ամպով,  
Սիրտս տիսուր, հոգիս խոռով,  
Դուրս եկ լուսին ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

96

Խաւար գիշերը ոխերիմ,  
Փակել է ճանապարհս իմ.  
Քեզի տալու գանգատ ունիմ,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

Անխիղն մութը սև, միգապատ,  
Գլորեց ինձի խորխորատ.  
Լոյս տուր չը մնամ յուսահատ.  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

Գիշերային կառավարիչ,  
Գեղանի հարս ես նկարիչ.  
Թշուառ մարդկանց միմիթարիչ,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

Քու շաւիղդ էլ իմիս նման,  
Մէդով պատած է մշտական.  
Ազաւում եմ, լեր օգնական,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

Մաքուր կաթից սպիտակ ես,  
Պոպղուն փայլուն շողակ ես,  
Աստուածային աշտանակ ես,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

Հորիզոնում լայնատարած,  
Եղել ես խաւարահալած.  
Դու անյաղթ ես, ես յաղթըւած,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից,  
Ազատէ ինձ այս վիճակից:

1886

97

Օտարութեան մէջը զուր անցաւ ջանքս.  
 Կարօտդ քաշելով մաշեցի կեանքս。  
 Կրկին գէպի քեզ է սիրտս, բաղձանքս,  
     Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
     Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան։  
  
 Ծննդավայր, երբ քեզանից հեռացայ,  
 Կարծես դրախտիցը գժողքը ընկայ.  
 Համըդ ու արժէքդ ես նոր իմացայ,  
     Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
     Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան։  
  
 Տկալներուն թէ չը ճնշէ հզօրը,  
 Կարելի է որդին մոռանայ հօրը。  
 Մանաւանդ քեզ նման հարազատ մօրը,  
     Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
     Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան։  
  
 Օտարութեան հացը ասացին մեծկակ,  
 Բայց գնացի տեսայ փոքր նկանակ,  
 Դառնահամ, անաճուն, սպառող քսակ,  
     Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
     Պապիս, մամիս, նախնիքներուս օթևան։

1883

Փմ սիրտս ցաւ ունի, իւր ցաւն է կոծում,  
 Դու ինչու ես ալեկոծուած, Կասպից ծով.  
 Չը գիտեմ ինչ ունիս, դու էլ ես հեծում,  
 Լայնածաւալ, համատարած Կասպից ծով։  
  
 Եկել ու անցել են գարեր շատ հազար,  
 Մինչ հիմա ապրել ես, գեռ կապրես երկար,  
 Հառաչում ես մենակ լինելուդ համար,  
 Մեծ ծովերուց հեռու ընկած կասպից ծով։  
  
 Ալիքներդ ուժգին, գոչիւնդ հզօր,  
 Յետ ու առաջ խաղում անում ես թափոր.  
 Մոքիս ծովն էլ քեզ պէս խաղաղ չէ այսօր,  
 Խոռված է և սրտմտած կասպից ծով։  
  
 Ունենալով պինդ շոգեշարժ մեքենայ,  
 Նաւերը ման կուգան քո կրծքիդ վերայ,  
 Գիտութեան ձեռքի տակ գարձել ես ծառայ,  
 Խեղճացել ես, մարդահալած կասպից ծով։  
  
 Զիւանու ազդին էլ ծանօթ ես, հէք ծեր,  
 Ափերդ շրջել են աւզաններ, հայեր.  
 Ճանապարհ ես դրել զանազան ազգեր,  
 Շատ չար ու բարիներ տեսած կասպից ծով։

1902

Փնա արքայանիստ մայրաքաղաքը,  
Զքնալ հարազատիս հասիր, ով նամակ.  
Այնտեղ է իմ հոգուս, կեանփիս ճրագը,  
Փնտրէ նրան շուտով գտիր, ով նամակ.

Գնա սպանդուխտ որդուս սիրտը գուրգուրէ,  
Ճմլուած ու ճնշուած հոգին կազդուրէ.  
Ճակատը, երեսը, կուրծքը համբուրէ,  
Անդրանիկիս ծոցը մտիր, ով նամակ.

Օտարութեան մէջը շատ վիշտ է կրել,  
Այս տողերը նրան լացով եմ դրել.  
Ծոցիդ մէջ մի փոքրիկ ծրար եմ դրել.  
Աղաչում եմ, որդուս յանձնիր, ով նամակ.

Զիւանուց շատքարև տար, հոգու ընկեր,  
Պատասխանիդ սպասում եմ անհամբեր.  
Գնա իմ որդուցս տեղեկութիւն բեր,  
Շտապիր շուտ վերադարձիր, ով նամակ.

1902



(Ուսանող որդուն երկար սպասող հօր երզը)

Հիւսիսային կողմից եկած ամպիկներ,  
Խնդրեմ ասէք, աղունիկս ի՞նչ եղաւ:  
Հողմեր, գորշ մշուշներ և մըսրիկներ,  
Ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Վազող կառախմբեր և սուրհանդակներ—  
Արագ տանող բերող թղթեր, նամակներ.  
Ծովեր, մեծ մեծ գետեր, սառն առուակներ,  
Ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Լուսաբեր արուսեակ—աստղերու տիկին,  
Անշէջ ճրագներ, կաճառ ծիրկաթին.  
Ողջ աշխարհը դիտող արև ու լուսին,  
Ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Գեղջուկ սայլապաններ, անմեղ սայլորդներ,  
Սարերու, ձորերու գաշտի անցորդներ,  
Ինձի մի լուր տուէք, բարի ճամբորդներ,  
Ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Ով գու մռայլ գիշեր, ով լուսաւոր տիւ,  
Պատրաստէ սրինդդ, սրբակեաց հովիւ.  
Մեծամեծ թռչուններ, կառնկ, սագ, արծիւ,  
Ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Մարդիկ, հրեշտակներ, երկնային զօրքեր,  
Շարժուն մոլորակներ, լուսատու աստղեր.

Քաղցրահնչիւն զեփիւռ, ով սիրուն եթեր,  
ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Լեզու առէք խօսէք դուք ծառ ու ծաղիկ,  
Քաղցր ձայնդ հանէ, սիրուն բլբուլիկ.  
Որսորդից հալածուած այծեամ ու եղնիկ  
ինձ ասացէք, աղունիկս ի՞նչ եղաւ:

Զիւանուս բարեկամ աշխոյժ երգիչներ,  
Տաղանդաւոր, չնորհալի գրիչներ.  
Ծանօթ ուսանողներ և ուսուցիչներ  
Խոդրեմ ասէք, անուշիկս ի՞նչ եղաւ:

1902



## ԱՂՋԻԿՆԵՐՈՒ ԳՈՎԱՅԻՆՔ

Պորս հատ աղջիկ ունիմ տանը,  
Ամեն մէկը ոսկի գոհար.  
Երշեմ բոլոր Հայաստանը,  
Փեսացուներ գտնեմ յարմար:

Սօփիան մէկ գառն է անմեղ,  
Ճարտարախօս, լեզուն համեղ.  
Նահանգի մէջ քաղաք թէ գեղ,  
Չի ճարուի նորան հաւասար:

Արփենին մէկ լսի կտոր,  
Դէմքը գրաւիչ, գօրաւոր.  
Աչքը, ունիքը աղեղնաւոր,  
Սիրտ գողացող մադնիսաքար:

Ոստղիկը ասող է լուսատու,  
Զայնը քաղցր, խօսքը ազգու,  
Հանդիպի յարմար փեսացու,  
Ուրախ սրտով ապրի երկար:

Արեահատս աննման,  
Հաստատ գովելու է արժան,  
Խնձորի ծառ է պատուական,  
Նորատունկ է կանաչ դալար:

Նրանց մայրիկը չոսսիկ,  
Պարգևել է ինձ չորս աղջիկ,  
Մէկնմէկ սիրուն հոտով ծաղիկ,  
Եղեմական այգու նուպար:

Կարապետ Պետրոսեանցո քիչ  
Գտայ սրտիս մխիթարիչ,  
Խնդրեցի՝ և մի հայ երգիչ,  
Գրեց այս երգը ինձ համար:

1902

ԵԲԻ

Մթնեց երկինքը, օդը վատացաւ,  
Սև սկամպերը դուրս եկան հանդէս.  
Երկնից անձրեսի գալը շատացաւ,  
Գետեր, առուակներ բացին առպարէզ:

Հողմը կը փչէ սառն հիւսիսից,  
Հաստ կաղնի ծառեր կը դցէ գետին.  
Ոլոտմունք, կայծակ ծերուկ Մասիսից  
Զոհ են պահանջում կրկին ու կրկին:

Մարդ թէ անտառն, թռչուն թէ դաղան,  
Փախել պահուել են իրանց խորշերում.  
Երկակենցաղը անվախ, անսասան,  
Երկդիմի մտքով միշտ խաղ է կանչում:

Երջանիկ գորտը, անձրևոտ տարին,  
Անվաս կապրի չորում թէ ջրում.  
Վայ գայ միամիտ ձկների գլխին,  
Զրից գուրս ելան՝ մահ է սպառնում:

1893

### ԵԿԱՆ ՊԵՏԵՑԻՆ

Էլի մթնեց յաջողութեան երկինքը,  
Սև խաւար ամպերը եկան պատեցին.  
Կորաւ խեղճի թափած արիւն քրտինքը,  
Անդութ չար ամպերը եկան պատեցին:

Սկսեցին ահեղագոչ որոտալ,  
Կայծակ գոյացնել ու կարկուտ տեղալ.  
Երկրի հետ սարքեցին մեծ զալմազալ,  
Անդադար ամպերը եկան պատեցին:

Երկիրն ասաւ պիտի տանեմ ինչ արած,  
Սկզբից այսպէս է կամեցել Աստուած.  
Կապոյտ հօրիզոնը պարզ, լայնատարած,  
Թուխ գումար ամպերը եկան պատեցին:

104

Տես, Զիւանի, ձիւնի փոխուեց անձրևը,  
Դեռ չք բացուած վարդը, թռումեց տերևը,  
Խաւարի մէջ կորաւ պայծառ արել,  
Հաւասար ամպերը եկան պատեցին:

1899



### ՆՅ ԻՐՈ Է, ԵՍ ՆԲԱՆՆ ԵՄ

Էլի միտքս վեր ոլացաւ, վառ սիրով տարուածի պէս.  
Հոգիս քնից նոր է զարթել, աչքերը հարբածի պէս.  
Չըկայ ուրիշ մէկ գեղեցիկ իմ սրտիս սիրածի պէս,  
Նա իմս է, ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,  
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

Մտայ սիրելիիս այգին, վարդ է բացուել վարդի մօտ,  
Վառուած երգում է սոխակը. աշխոյժով վաղ առաւօտ.  
Ես հոգեակիս կը որոնեմ, նա էլ գիտեմ ինձ կարօտ.  
Նա իմս է, ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,  
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

Երկյարկանի ապարանքի լուսամուտին եմ նայում,  
Սիրտս տիսուր սպասում եմ նազելիս չի երկում,  
Առանց նրան լոյս ու արև ինձ համար չէ աշխարհում,  
Նա իմս է, ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,  
Զեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

1902

105

ՀՅԱՍՏԵԲՑ ԵՐԳԵՐ

Աղջկայ մնասքարեաւը հօրը

Աղջիկը— **Ա**րի հայրիկ, արի իմ կեանք,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ.  
Անուշ ծնող բարի իմ կեանք,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը— Ունեցիր խելք, չնորհք ու շէնք,  
Գնա որդիս, Աստուած քեզ հետ.  
Ամուսնութիւնն է սուրբ օրէնք,  
Գնա որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջիկը— Եի ամեն հոգսէ ազատ,  
Տանդ մէջ անմեղ անարատ,  
Օրհնէ ինձի, հայր հարազատ,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը— Փեսայիդ հետ սուրբ պայմանով,  
Ուրախացիր միշտ նրանով.  
Տէրը օրհնէ իւր բերանով,  
Գնա որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջիկը— Ի՞նչպէս ջոկնըւիմ, քեզանից,  
Մեծ ես ինձ հայար իշխանից,  
Բաժինս կտրաւ այս տանից,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Հայրը— Կեսերդ ու կեսրարիդ արժան,  
Պատուէ հօրդ, մօրդ նման.  
Քեզ չեմ մոռանայ յաւիտեան,  
Գնա որդիս, Աստուած քեզ հետ:

Աղջկայ մնաս բարեաւը մօրը

Աղջիկը— **Բ**աղցը մայրիկ, հոգոյս հատոր,  
Օրհնէ ինձի, ես գնում եմ.  
Քեզ հետ ապրեցայ բախտաւոր,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը— Լրացաւ քու ժամանակդ,  
Դուստր իմ, գնա, մի լար գնա,  
Վայելէ թագ ու պսակդ,  
Գնա որդիս, մի լար, գնա:

Աղջիկը— Բեր համբուրեմ ձեռքդ, մայրիկ,  
Կերել եմ կաթըդ անուշիկ,  
Երանի չը լինէի աղջիկ,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը— Մի գնար վատ գրացու տուն,  
Խելք ու մտքով եղիր արթուն.  
Ունեցիր միշտ բարի անուն,  
Գնա որդիս, մի լար, գնա:

Աղջիկը— Կտրեցիր քունդ ինձ համար.  
Օրօր ասելով անդադար,  
Ո՛վ իմ ծշմարիտ բարերար,  
Մնաս բարեաւ, ես գնում եմ:

Մայրը— Եկաւ փեսան դու ոտքի ել,  
Ե քեզանից նա առաւել.  
Նորան քեզ Տէրն է կասեցել,  
Գնա որդիս, Աստուած քեզ հետ:

1876

ԼԵՅՆ ՈՒ ԺԻԾՑԱԼ

Արող սրտի քնարի նուրբ թելերը,  
Հեշտ նուագածու են լացն ու ծիծաղը.  
Իրարու հետ ներդաշնակ չեն երգերը,  
Մէկ մէկուց հեռու են լացն ու ծիծաղը:

Լացը սդի, մաճի օրուան երգիչ է.  
Բայց ծիծաղը ուրախութեան դրդիչ է.  
Մէկի երգը միւսին կործանիչ է  
Այնքան որ ազդու են լացն ու ծիծաղը:

Լացի գործը գառնութիւն է, կոկիծ է,  
Ծիծաղը հրճուելու նոր նախագիծ է,  
Մէկը ցնծութիւն է, միւսը թախիծ է,  
Քաղցր ու կծու են լացն ու ծիծաղը:

Ծիծաղողը, տեսար, նստել է կուլայ,  
Լացողը՝ հակառակ այլ տեղ կը խնդայ,  
Լացը ծիծաղ, ծիծաղը լաց կը գառնայ,  
Կարծես թէ շինծու են լացն ու ծիծաղը:

Համ ծիծաղել, համ էլ լացել ես Զիւան,  
Ծիծաղը կեանք սիրող, լացը գերեզման.  
Աշխարհի ոկրից եղել են և կան,  
Շատ հին են, թթու են լացն ու ծիծաղը:

1899

Թ. ՄԱՍ

ԱՇՈԽԸ ԴԱՖՏԱՐԸ

Դասթան, ընդդիմախոսական, բարք ու վարք պատմական  
հիարագրական. Աշանառոր դիպուտածք. Ժամանակա-  
գրութիւն:

Յաւելուած: Երգեր գաւառական բարբառով:



ԵՐԳ ՈՒ ԵՂԱՆԱԿԻ

Երգն ու եղանակը թռչուն են ջուխտակ,  
Երկուսը երկու թև ունին կը թռչեն.  
Մէկի թևն է կոճակ, միւսինն օղակ,  
Անշուշտ հարկաւոր են միշտ մէկը մէկն:

Երգը առանց եղանակի ունայն է,  
Եղանակը առանց երգի լոկ ձայն է.  
Երգը եղանակով գործը կը լայնէ,  
Եղանակն էլ պարտական է լաւ երգին:

Երգը առանց եղանակի, բարեկամ,  
Զի արժել իսկապէս մէկ կոտրած դրամ,  
Եղանակն էլ առանց երգի չունի համ,  
Դադարկ ձայն է, կամ թէ անհոգի մարմին:

Ջիւան, թէ լսում ես մի քիչ գովասանք,  
Եղանակն է տալիս քու երգերուդ կեանք,  
Մէկ մէկու հետ այնպէս կապուած են նրանք,  
Ինչպէս որ պսակուած սիրով մարդ ու կին:

1899



**Չ**նոտ սարեր, ելման գետեր,  
Ծաղկոտ դաշտեր ունիս, կաւկազ.  
Սառն ջրեր, ձկնոտ լճեր,  
Բաղում հանքեր ունիս, կաւկազ:

Չըկայ քու նմանդ երկիր,  
Խայտաճամուկ, կանաչ կարմիր.  
Պտուղդ, բերքերդ ընտիր,  
Քաղցր մրգեր ունիս, կաւկազ:

Բարեխնամ քու տէրդ քաջ,  
Կեանք է տուել քեզ բարդաւաճ.  
Օր առուր գնում ես առաջ,  
Բարի մտքեր ունիս, կաւկազ:

Չանազան ազգերու ծովակ,  
Հորիզօնդ պարզ, կապուտակ.  
Լեզուները բազմատեսակ,  
Չոկ ջոկ ցեղեր ունիս կաւկազ:

Քաջ են չեշենները լեզդիք,  
Օս ու չերքէզ, հրէան ճարպիկ.  
Վրացի, թուրք, ուռու, պարսիկ,  
Խելօք հայեր ունիս, կաւկազ:

Շատ բան կամեցել է Աստուած,  
Քեզ, ով երկիր լայնատարած,  
Հայից, Վըրացուց մնացած,  
Շատ հին վանքեր ունիս, կաւկազ:

Լաւ լաւ քաղաքներ, փողոցներ,  
Առատ այգի ու ծաղկոցներ,  
Աշտարակներ և ամրոցներ,  
Ամուր բերդեր ունիս, կաւկազ:

Բարեխառն է քու կլիման,  
Օդդ մաքուր և պատուական.  
Մէջդ բազում կենդանիք կան,  
Սիլուն հաւքեր ունիս, կաւկազ:

Զիւանուն յայտնի ես, անահ,  
Առատ երկիր գու բաղմաշահ,  
Ուազմագէտ, վարժ, կարգապահ,  
Կտրիչ զօրքեր ունիս, կաւկազ:

1899

**Մ**եծ մարդու մէկը նժոյգ ձին տակին,  
Զինուած, զարդարուած գնում էր որսի.  
Թւաւորի պէս թռչում էր իւր ձին,  
Վազում էր արագ, բնաւ չէր յոգնի.

Երկու մեծ գամբու և երկու ծառայ,  
Ունէր իւր հետը այդ մեծ պարոնը,  
Հաստ ու յաղթանդամ որպէս մի հսկայ,  
Կարծես նա ինքն էր քաջն Սամսոնը:

Աշնան մօտիկ էր, օրը գեղեցիկ,  
Կապոյտ երկինքը վճիտ ու մաքուր.  
Քաղցր հովիկը փչում էր մեղմիկ.  
Զովացնում էր սրտերը տխուր:

Նատ դնաց թէ քիչ, տեսաւ մի մեծ սար,  
Թևերն ու կուրձքը անտառով պատաժ.  
Սարից քիչ ներքեւ շատ գառ ու ոչխար  
Արածում էին դէս ու դէն ցրուած:

Յիշեալ քաջ հոկան բարձրացաւ քիչ վեր,  
Մտաւ անտառը ծառաներու հետ,  
Տեսաւ մի գառնուկ, մատղաշ գառնուկ էր,  
Մոլորել, հօտից մնացել է յետ:

Անտառի խորքից մի գայլ դուրս ելաւ.  
Տեսնելով գառին վազեց գէպ նրան,  
Խղճուկ գառնուկի սիրտը դող ընկաւ.  
Բառաչեց մօրը, կանչեց օգնութեան:

Քիչ էր մնացել գայլը խեղճ գառին,  
Պիտի բզըկտէր՝ գամբոներն հասան.  
Բամակը տուեց կաղնի մեծ ծառին,  
Սկսեց կուռել առիւծի նման:

Պարոնը տեսաւ որ գամբոները  
Չեն կարող խեղդել ամեհի գայլին,  
Լարեց աղեղը, հանեց սուսերը,  
Գետին գլորեց կատաղի գայլին:

Սպիտակ, սիրուն գառը աղատուեց,  
Բայց մրից ելաւ մըրջուրը ընկաւ.  
Իւր աղատողի ոտքերը լիզեց,  
Խոնարհած գլխով գոհութիւն տուաւ:

Պարոնը մտքում շատ ուրախացաւ,  
Որ Աստուած իրան բաժին ուղարկեց.  
Դանակը սրեց գառին մօտեցաւ,  
Որ պիտի մորթէր, մի խեղճ ձայն լսեց:

Գառի հոգին էր խօսեցաւ սրտից,  
Ասաւ պարոնին—Մի անել վատ բան.  
Էլ ուր փրկեցիր գայլի ճիրանից,  
Որ դու էլ պիտի տայիր ինձ զիյան:  
—Գայլը գազան է, խղճմտանք չունի,  
Նա թշնամի է, ոչխարի ցեղին.  
Զէ որ դու մարդ ես և մեծահոգի,  
Եկ, մի սպանել ինձ պէս անմեղին:

Զըլսեց գառին այն մարդ գաղանը,  
Մորթեց ու շինեց սիրուն խորոված.  
Սրտաճմիկ էր այդ տեսարանը,  
Տեսաւ ու լսեց վերևից Աստուած:

1900

—ՀՀ ՀՀ—

### ԱՅՈՒՂՆ ՈՒ ԲԸԼԲՊՈՆԸ

Առողի— **Պ**ու ինչու համար ես լոել,  
Խնդրեմ ասա, բըլբուլ ախպէր.  
Քեղնից հրաման չեն ուզել,  
Արդեկը չըկայ, բըլբուլ ախպէր:

Բըլբուլ— Յաւս քու ցաւիցդ շատ է,  
Իզուր մի լայ, աշուղ ախպէր.

Զի ասուիլ, ինձ համար վատ է,  
Թող տուր մնայ, աշուղ ախպէր:

Առողը— Ինձ պէս մերկ չես, հալաւ ունիս,  
Հմուտ երգչի համբաւ ունիս.  
Ինչու ես լուռ, ի՞նչ ցաւ ունիս,  
Որ չես կարդայ բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Վարդիս քնքոյշ տերևիկը,  
Կողոպտել է թիթեռնիկը.  
Մի բանար ցաւիս կծիկը,  
Դործիդ դնա, աշուղ ախպէր:

Առողը— Դրախտ այգիներում՝ կապրիս,  
Թւ ունիս, ազատ կը թռչիս.  
Ցաւը իմս է, դու ցաւ չունիս,  
Մի տրտնջար, բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Դրախտն ունի մի այգեպան,  
Երգ չը սիրող չար ու դաժան.  
Այգու մէջ մեծ մեծ օձեր կան,  
Թոյն կը տեղայ, աշուղ ախպէր:

Առողը— Թէ չուզես այգու մէջ մնալ,  
Կարող ես թողնել հեռանալ.  
Ազատ օդի մէջ սլանալ  
Չեռքէդ կուգայ, բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Հայր ու մայրս այստեղ եկել,  
Չարչարուել են, բուն են շինել.  
Չեմ կարող այս բունը թողնել,  
Այստեղ ծնայ, աշուղ ախպէր:

Առողը— Թուիր, դնա, երկիրներ տես,  
Ուրախ, զուարթ, ծիծաղերես.  
Դուն էլ խօմ օրէնքի տակ չես  
Երգէ, իւաղա, բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Խելահաս մեծի խրատը,  
Կը սրբէ մարդուս արատը.  
Օրէնքով կտրուած մատը  
Կոկիծ չի տայ, աշուղ ախպէր:

Առողը— Ծաղկանց թագուհի վարդենին,  
Քեզ է տալիս կեանքն ու հոգին.  
Երջանիկ ես թոշնոց միջին,  
Ցնծա, ինդա բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Լալիս եմ աչքերս լցուած,  
Հոգիս խոռով, սիրտս խոցուած.  
Վարդը իմ ծոցիս մէջ բացուած  
Ես չը տեսայ, աշուղ ախպէր:

Առողը— Լաւ է էլ չը խօսենք, լոենք,  
Մեր ցաւը մեր մէջը պահենք.  
Ես էլ, դու էլ երջանիկ չենք,  
Լաւ հասկացայ, բըլբուլ ախպէր:

Բըլբուլը— Քանի որ կայ վարդը կարմիր,  
Պիտի երգեմ ես քաջ ու ժիր,  
Քու գալովդ ինձ կեանք տուիր,  
Հոգի առայ աշուղ ախպէր:

Առողը— Մնաս բարով բարի թռչուն,  
Աշխոյժ երգիչ և զգայուն.  
Շուտով կը բացուի նոր դարուն,  
Ցուրտ է հիմա, բըլբուլ ախպէր:

Բըլքուլը -- Գնաս բարով քու տնակդ,  
Աստուած կատարէ փափագդ.  
Վար մի քնիր քու ջութակդ,  
Մի ծուլանայ, աշուղ անպեր։  
1900

### Պ Ե Ս Թ Ա Ն

Պնչ կենդանի փոքրին կուլ տալ է ուզում,  
Զըկի փուշ կը լինի, կը խրի բուկը.  
Թէ ոստայնը ճանճեր որոսլ է ուզում,  
Քթիցը մանելով կուտեն ծծուկը։

Ո՞ւր է լաւ կենդանի առիւծի նման,  
Ուժեղի գէմ կանգնող, տկարին պաշտպան.  
Իւր ցեղի մեծ միներ գալով օգնութեան,  
Կատուից կազատուի խեղճ փոքրիկ մուկը։

Կանցնին այս օրերը դառը և ձախորդ,  
Յաջող տեղ կը հասնի ամենայն ճամբորդ.  
Կուգայ ժամը կը լինի արթուն պահանորդ,  
Գայլը չի գողանալ հօտից դառնուկը։

Քնից կարթնանայ ծովը ովկիան,  
Իւր միջի կենդանեաց կուտայ զէնք, վահան.  
Ոչ կարթի կը անցնի, ոչ կընկնի ուռկան,  
Բնական մահովը կը մեռնի ձուկը։

Բլուրն էլ կը դառնայ մէկ օր բարձր սար,  
Պատիւ կառնէ մեծ սարերուն հաւատար.  
Էլ չի ծաղրիլ ծառը հասակով երկար,  
Պատուագ կը մեծանայ կանաչ թղուկը։

Պարարտ ոչխարնելը, կովերը կթու,  
Կըստանան խօտաւէտ տեղեր կենսատու.  
Էլ չեն թողնել նրան արին ծծելու,  
Կանհետանայ փողոցային տղուկը։

Ով վախկոտ է, նա միշտ ոտից կոխան է,  
Ամեն անդամ ոտրկութեան արժան է,  
Ահոելի վիշտապի օրը ուե կանէ,  
Իւր անձը պաշտպանող խելօք խողուկը։

Զրիակերներուն ինչ են պարտական,  
Մարդիկ առանց գործի նրանց անունդ տան.  
Փեթակը կիմանայ տէրը իսկական,  
Ամեն ոք չի տանիլ մեղրի պուտուկը։

Էլ գիւղացին եղին թակել չի կարող,  
Կալի մէջ բերանը փակել չի կարող.  
Գող ուրուրը յափշտակել չի կարող,  
Ազծուի թեի տակ մտաւ ճնճղուկը։

Խուլը ձայն կը լսէ երկնից ահարկու,  
Մունից ճառ կը կարդայ, կըստանայ լեզու,  
Օրոցքիցը մէկ օր կը նստի ձիու,  
Բալուկով փաթաթած անխօս մանուկը։

Արդար հզօր պետը խելքով թանգարին,  
Գայլ ու ոչխար կապրեցնէ յիստին.  
Ոսկին աւագակաց չի լինի բաժին,  
Պատսապարում է երկաթէ մնտուկը։

Էլ քամի չի վանտիլ հին սալիկը,  
Կրթեցին, մարդ չեղաւ անպոչ կապիկը,  
Առասպել դուրս եկաւ ծովի աղջիկը.  
Անց չի կենալ թասի նայող վհուկը:

Ողջ կենդանիք պիտանի են, լեր գիտակ,  
Ամեն մէկը մէկ-մէկ բանի ընդունակ,  
Քանի որ աղաւնին դարձաւ սուրհանդակ,  
Մէկ օր էլ կը հնչէ հաւի թմբուկը:

Գարնան կը փոխարկուի ձմեռը երկար,  
Կանցնի աղջամուզը, գիշերը իւաւար,  
Նոր սանտրեր կը շինուի հին գլխի համար,  
Կը մաքրուի Արեւելան թնջուկը:

Տեղ կայ, համբերելով գործ կը կատարուի,  
Տեղ կայ, շտապելլ շատ կը յարմարուի.  
Մինչև որ ձիթենին հագնի, զարդարուի,  
Որդին կը նշանէ խել խրինտուկը:

Մարդ կուզեմ որ դարի պահանջն իմանայ,  
Չը յապազի, շուտով իւր գործը գիտնայ,  
Մինչև որ թրթուրը թիթեռ կը դառնայ,  
Պարտիզից կը վերնայ կանաչ բազուկը:

Զինւորի պարծանքն է պսպղուն սուրը,  
Նա կը սիրէ զէնքի լաւը, մաքուրը.  
Գութնի խոփ կը դառնայ բթացած թուրը,  
Կտրէ կանցնի կերթայ խորը, կարուկը:

Կայ այնպէս կենդանի, թէպէտ յաղթանդամ,  
Բայց առանց աէր նա չի ապրիլ ոչ ժամ.  
Էշից և ոչսարից բարձր է շատ անդամ,  
Դոյլութեան կռուի մէջ խելօք մժղուկը:

Ջիւանի, նոր մարդը նոր բաղձանք ունի,  
Գժուար առաջ գնալու ճիգ ու ջանք ունի,  
Նրա լժոռը գովէ որ գեռ կեանք ունի  
Չի մանկանալ հին զառամեալ ծերուկը:

1901

### Դ Ե Ս Թ Ա Կ

Այնքան ինձպէս չեղար, գու անխղճանք,  
Որ ինձ արիր քեզի նման, դրացի.  
Երկուքս էլ մէկ տեսակ դրութեան հասանք,  
Ինչ ունէինք առան, տարան, դրացի:

Աստուած երկնքիցը մեր սրտին նայեց,  
Մեր մեղքի համեմատ նա մեզի պատժեց.  
Ինձ էլ քու ընկածդ հորի մէջ ձգեց,  
Իրաւ գտանք մենք անբաժան, դրացի:

Այսուհետեւ կուզես խնդա, կուզես լաց,  
Ընկանք անդունդի մէջ—ոչ ջուր կայ, ոչ հաց,  
Թէ քու դուռդ փակ էր, իմ դուռը էր բաց,  
Մերթ լինում էր քեզ իջևան, դրացի:

Խնդրեմ ասա, քեզ ինչ օգուտ այս բանից,  
Որ ինձ էլ զրկեցին իմ օթեանից,  
Ոչ ոք գոհ չէ ոչ ինձնից ոչ քեզանից,  
Որ չեղանք մէկ-մէկու պաշտպան, դրացի:

Խելքիցդ դուրս յարձակուեցիր ինձ վերայ,  
Նախատեցիր, հայհոյեցիր անխնայ.

Ես ի՞նչ անեմ որ սարերից հեղեղ դայ,  
Սրբէ տանի ամեն մի բան, դրացի:

Ինքդ էլ չիմացար թէ ի՞նչ մոտածեցիր,  
Եշը թողած համետը հարուածեցիր.  
Իզուր տեղը չարութիւն սերմանեցիր,  
Եղար դու մեծ որոմնացան դրացի:

Մեր ձեռքով մեր կեանքը կը համառօտենք,  
Դեռ մեռած չենք, բայց մեռնելու շատ մօտ ենք.  
Տներուս մէջ աւուր հայի կարօտ ենք,  
Ես փերեզակ, դու մուրացկան դրացի:

Այժմ երկուսիս էլ մուխը մարեցին,  
Լեռ քարերով դռներս վեր շարեցին.  
Մէկ կտորից պատանկներս կարեցին,  
Պատրաստեցին խոր գերեզման, դրացի:

Ոտքերս շղթայած, ձեռքերս կապած,  
Լուռ ու մունջ նոտել ենք, անխօս, կարկամած.  
Վերև նայենք մազից մէկ սուր է կախուած,  
Վար նայենք՝ մեծ վիշապներ կան, դրացի:

Ի՞նչ հնար մոտածենք, որ չը մահանանք,  
Կամ թէ վիշապներուն մենք կուլ չը գնանք.  
Պէտք է իրար սիրենք, իրար հասկանանք.  
Այս է ելքը իմ սիրական, դրացի:

Աշխատենք մեր ճանապարհից չը սահենք,  
Ուժեղ բարեկամաց սրտերը շահենք.  
Այնքան աշխատենք որ մենք մեղի պահենք,  
Տեսնենք ի՞նչ է մեր ապագան, դրացի:

Ինձանից քեզ դուն վատութիւն մի յուսայ,  
Ինչպէս դու քեզ և քու անձիդ՝ հաւատայ.  
Դու էլ ինձի չարութիւն մի կամենայ,  
Իմ բարեկամ, իմ պատուական դրացի:

Մեր մէջ դժուար, չը լուծուելու վէճ չունինք,  
Որ իրար հակառակ, թշնամի լինինք.  
Իզուր չէ մէկ-մէկուց լսենք նախատինք,  
Լինենք անպէտք ու անարժան դրացի:

Լաւ զտենք հին ու նոր գաղափարները,  
Լաւ առնենք, դէն քցենք մենք վատթարները.  
Թէ ձեր, թէ մեր նախնեաց հին տաճարները  
Մնան մինչ երբ կիսակործան, դրացի:

Մեր պապերը իրար եղբայր են եղել,  
Միշտ իրարու բարութիւն են կամեցել.  
Մենք ևս սկսենք իրարու գովել,  
Զիւանս խնդրում եմ այսքան, դրացի:

1898

### Դ Ա Ա Թ Ա Ն

Որի շուրջը դժնիկ վշով է պատած,  
Մի մտնիր այն այդին, անփորձ պատանի,  
Նրա ստուերի տակ օձեր կան պարկած,  
Ապահով չէ ամեն ծառի հովանի:

Շատ է այս աշխարհի ճարպիկ խաբեբան.  
Հազարից մէկը չէ ուզածիդ նման.  
Ակը կեղծ քարից է մեծամասնութեան—  
Ադամանդ չէ ամեն փայլող մատանի:

Երբեմն կը դառնայ սագը փոքրիկ հաւ,  
Աչքերդ բաց, ուշի ուշով զննէ լսու.  
Արտաքինով մի շանար դու բնաւ,  
Կարծածիդ պէս դուրս չի գալ շատ գեղանի:

123

Հայոց բառեր

Հաւերու մէջ աքլորը մեծ ըմբիշ է.  
Ճղնաւորին քարը փափուկ քայիշ է.  
Աշխարհաշն խելօք մարդը ուրիշ է,  
Շատ կայ խօսուն, մարդու նման կենդանի:

Փող է ծախսել, ման է եկել Եւրոպա,  
Հագել, կապել, ծածկել է թանգ շլեապա.  
Գլխարկը մեծ, տակը մեծ գլուխ չը կայ,  
Շատ կը գտնիս այդ տեսակ մարդ անուանի:

Փառաւորուած, փայլող մարդ գերազանցը,  
Կաշկանդուած է, նա էլ ունի իւր ցանցը.  
Թէ կաւ քննես, երջանիկ չէ այն անձը,  
Ում որ կասեն՝ երանի քեզ, երանի:

Աստուծոյ գաղտնիքը մարդ չի իմանայ,  
Փրկիչը մսուրի մէջը կերևայ.  
Շատ անդամ մեծ տանից մեծ մարդ գուրս չի գայ,  
Խուզերից կը ծնեն քաջեր պիտանի:

Զանայ գտնես անանց կեանքը երկնային,  
Վաղանցուկ է շուքն ու փառքը մարդկային.  
Առողջութիւն չի տալ հիւանդ արքային,  
Ուկով պատած իւր զգեստը ծիրանի:

Ճանաչէ լաւ բանի արժէքը, գինը,  
Ներսինին չի հասնիլ գոված գրսինը.  
Մինչեւ նորը ճարես, կը կորչի հինը,  
կը ստոնանայ բարեկամդ ընտանի:

Սիրունը տգեղին կը լինի արժան,  
Առողջ տղամարդը կառնէ խեղ կնկան.  
Աշխարհի մէջ հակառակ է ամեն բան,  
Չեն հանդիպել ով ում է արժանի:

Քարոզիչը թէ չը լինի անարատ,  
Նա սրբութեան մասին չի խօսիլ ազատ.  
Թէ մէկը գործ չունի խօսքին համեմատ,  
Կը համարուի թութակի պէս լեզուանի:

Ժողովուրդն է թէ գիւղ թէ քաղաք շինող.  
Նա է անշունչ առարկային կեանք տուող.  
Ոչ աղօթող ունին, ոչ կարդ կատարող,  
Շքեղ եկեղեցիք շատ ունի Անի:

Ամէն ոք բարի չէ, վրադ չի խղճալ,  
Բան մի ասիլ, զուր տեղը մի մերկանալ.  
Ամեն մարդու քու վէրքերդ մի ցոյց տալ,  
Բժիշկ ճարէ որ դնէ սպեղանի:

Հպարտ մեռիր, գաղտնի պահէ սրտինդ,  
Թող թշնամին չիմանայ քու ներսինդ.  
Քանի ողջ ես, գառնութիւն է բաժինդ,  
Երբ մահացար՝ կը քաղցրանաս, Զիւանի:

1899



## ՅԱԻԵԼՈՒՄԾ

ԵՐԳԵՐ ԳՍԽԱՌԱԿԱՆ ԲԱՐԲԱՌՈՎ

ՅՅԵԿԵՐՏԸ ԽՐԵՑՈՒՄ Է ԱՅԹԵՊԵՑԻՆ

Սէրդ, սաւտէդ անճախ տուեր ես թղթին,  
Տունդ, տեղդ, օղուշաղդ մոռցեր ես.  
Առաջուայ պէս ուրախ տուն չես գար վախտին,  
Դարտոտեր ես, ձէնով խաղդ մոռցեր ես:

Եղ խումարէն վէզ է խերուեր, մէմ ըսա.  
Քէզնէն առաջ խաղցողներէն առ հիսա.  
Զեպը դարտակ, առանց փարայ ու քիսայ  
Սիպիրական հին օրթաղդ մոռցեր ես:

Սադայելի, չար սատանի զաւակը,  
Քեզ խարեր, առեր է իրան շալակը.  
Հոգիդ նետեր ես դժոխքի կրակը,  
Դրախտի պէս քու օճախըդ մոռցեր ես:

Արափն\*) եմ, կաղաչեմ, վազ արի թէզըմ,  
Մանտր-խոշոր ունիս տունդ մէ ազըմ.  
Քու հին զայտէդ չալէ, ձեռքդ առ սազըմ,  
Կերենայ թէ դուն չրաղդ մոռցեր ես:

1899

\*) Արափ, Աերովբէ—Զիւանու խական անունն է.

Տէյմօր եփ, տէյմօր եփ, ախ, անիսափ եար.  
Խօսք տաս, խարես, հեռու ժուռ գաս դու ինձէն.  
Էղման օր հովցեր ես, ըսահ ինչ խապար,  
Գիտեմ օր չես տեսեր վնաս դու ինձէն:

Զեմ տեսեր քեզի պէս թիթիզ, թիրաքիմ.  
Թապիաթդ չես փոխեր, օր գայ մեծ հեքիմ,  
Իմ ամակս աչքդ բռնէ բիլաքիմ,  
Քիչ ես հաքեր ատլաս ու խաս դու ինձէն:

Արափն եմ, սրտիս մէջ բացեր ես եարա,  
Քեզնէն սրտիս եարին չի էղնիլ չարա.  
Էղման օր ինատիդ կայնիս կը վերայ,  
Շատ կիմանաս էվել պակաս դու ինձէն:

1899

ՔԵԿՈՒՊՈՒԹԵՆ

Ալլէնին կատու կը շինես,  
Գրողի գաս, քեասիպութեն,  
Աղաս մարդուն եսիր կենես,  
Ծախել կուտաս, քեասիպութեն:

Բլած է տանըդ յառիքը,  
 Քեզանից է ծնել չիքը,  
 Լեղի, օձի կաթով լիքը,  
 Հոտած կարաս քեասիպութեն։

Ամօթով ես քովը փեսիդ,  
 Մէջը փարայ չը կայ քիսիդ.  
 Վով կաշէ քու գէշ երեսիդ,  
 Աղտոտ փալաս քեասիպութեն։

Վրէդ կառնես խոտէ ապա,  
 Կը հագնիս կրակէ կապայ.  
 Էն տունը կենես խարապա,  
 Ուր որ էրթաս, քեասիպութեն։

Ընկած տեղդ կը մնաս կոր,  
 Նէ գիշեր գիտես կը նէ զօր.  
 Սրավը չի տեսնի լաւ օր,  
 Քանի դու կաս, քեասիպութեն։



### ԲԱՍԵՆՑՈՒԻ ԽԵՂ

**Ս**էվկիւլի ախպէրս, ջանս, ջիկեարս  
 Մէջը զարիպութան որման է յըճըփ.  
 Հըմըքի կտրել է սապրս, զարարս.  
 Կաշեմ չի դայ վաթան, որման է յըճըփ։

Էս բանը իմ սրտիս շատ դէֆար կուքայ,  
 Հեռեանց խէրի տեղ մեծ զարար կուքայ.  
 Նէ գիրըմ կը գրէ, նէ խապար կուքայ,  
 Փայլըւանս տղման որման է յըճըփ։

Սրավին եմ, բարկըցել, դարձել բարակ թել,  
 Իմ դարտէս աշխարհքը դարտ չըկայ յաւել.  
 Ախպէր ջան կանչելով կէս մարդ եմ էղել,  
 Անտէր, անտիրական որման է յըճըփ։

1889

### ԲԱՍԵՆՑՈՒԻ ԽԵՂ

**Տ**ը մանչ, էդման խելառ բաներ էնել մի,  
 Գու ճտիդ մի առնու ուրիշի դաւին.  
 Զըմի օրըմ նստիս դու սատանի ձի,  
 Էրթաս քշօ ըսես դրկըցի հաւին։

Մէ պուտմ ջուր խմէ դու խելքի ծովէն,  
 Զոկնուի անլիզու եղէն ու կովէն.  
 Գէշ մարդուն քրգեն կը, փախնին կը քովէն,  
 Դու ու դուրպան գըմին ամենքն էլ լաւին։

Ես աշըդ Սրավին եմ, տարիս է քառսուն,  
 Անձախ վաստըկել եմ մէ քիչըմ անուն.  
 Անաճալ կը մեռնիմ, Աստըծու սիրուն,  
 Յարունքը մի մտնի բրտուճըմ կաւին։

**Յ**ուշնտիկ-մռնտիկ, կոկիկ-մոկիկ եար,  
Սկիկ-մեկիկ վառ աչերիդ կարօտ եմ:  
Խօրոտիկ-մորոտիկ, մանրէ մնրիկ եար,  
Շեկիկ-մեկիկ քու պատկերիդ կարօտ եմ:

Նազ ու մազ մի անիլ թութուշ-մումուշ—  
Լեղկ ու մեղկ խօսքերով անուշ-մանուշ.  
Պստի մստի կաքաւ, պուտուշ-մումուշ,  
Խաղիդ մաղիդ, պարիդ մարիդ կարօտ եմ:

Բերան մերան, երես մերես կլորակ,  
Գանգուր մանգուր խոպաներիդ ոլորակ,  
Գլուխ-մլուխ, ճակատ-մակատ բոլորակ,  
Կամար-մամար կեռ ունքերիդ կարօտ եմ:

1902



### Ո Ւ Ղ Ի Ն Ա Զ

**Զ**ինարի պէս պօյդ, պուսըդ, Սէլլինազ,  
Հաքնիս կապես դէմս իլվան կենես կը.  
Միրես կը խաղ ու տաղ, քեմէնչէ ու սաղ,  
Կերթաս պաղչաները ոէյրան կենես կը:

130

Փէնճէրեցէն կանչես, դավաթ կենես տուն,  
Էշուիդ զարնըւողին չես թողնի մաղպուն.  
Հազար էրնէկ կուտամ էն տղամարդուն,  
Օր դու կուզես, ջանիդ ջանան կենես կը:

Յերեսդ տեսնողին պէտ չէ հաց ու միս,  
Պաշարի ամբար ես, ամեն ինչ ունիս.  
Էօմրը կաւելցնես ում հետ օր էղնիս,  
Մրտով էլստիարին ջիւսն կենես կը:

1896

### Ո Ւ Ղ Ի Ն Ա Զ

**Վ**արեր, խորունկ ձորեր, խապարմ տուէք,  
Եմ յուշնտիկ անուշ եարս ուր գնաց.  
Էս եարալի սրտիս մահլէմմ դրէք,  
Թաժա ծաղիկ անուշ եարս ուր գնաց:

Մէ խնձորի ծառըմ էր, համով ու հոտով,  
Ալ ճերմակ երեսով, չէնքով, շնորհքով.  
Շղփա սէլլիի պէս պօյով-բուսաթով,  
Գեր, գնալլիկ անուշ եարս ուր գնաց:

Մրամին եմ աւելցաւ թալաշ ցաւս,  
Չունքի, ճեռքէս թուաւ յուսնտ կաքաւս,  
Աւճի եմ, փնտրեմ կը կորուցած տւս,  
Մարի եղնիկ անուշ եարս ուր գնաց:

1901



**Պ**ուչուստ, չուչուստ մէկ՝մ կուքայ,  
իստակ իմ եարիս գըլմանի.

Պոյին, պուսին խելքս կերթայ,  
Քալուացքը տնկօղ, նազանիւ:

Գունաւոր հալաւը թաժայ,  
Հագել դարձել է դորթ Սօնա.  
Երնէկ իմ եարս ըլլենայ,  
Զեռնէս բռնէ քովը տանիւ:

Իմ եարս յուռնտ կաքաւ է,  
Մատները բարակ ճնաւ է.  
Զէնը կոնկի պէս լաւ է,  
Խօսող, զրցող համ լիզուանիւ:

Հագել է դութնի դպունը,  
Կտրել է Սրափիս քունը.  
Դարձել եմ էշխի ջունունը,  
Զեմ աշել դործի ու բանիւ:

1902



**Ե**ար, քու էշխիդ կրակովը էրւում եմ փարուանի պէս,  
ինձ դու արել ես քեզ աւճի սարերու ջէյրանի պէս.  
Սպիտակ բիլու բոխախդ տեսնողը հոգի կուտայ.  
Կարմիր, բարակ պուռնկներդ եազուտի, մարճանի պէս:

Քանի կարողաւոր մարդիկ մեծ բէկ ու հարուն զարուն.  
Դուանդ ծառայ են դարձել եղել են խեղճ ջունուն.  
Ի՞նչ ունիս քու աչքերիդ մէջ, ի՞նչ զօրութիւն կայ թաքուն,  
Դիմացդ գառի են փոխուում քաշերը ասլանի պէս:

Առանց քեզ ապրել, Զիւանուն, գիտեցիր անհնար է.  
Երեխային մօրը կաթից կտրելու չափ դժուար է.  
Եար, քու տուած յիշատակդ կեանքիս հետ հաւասար է,  
Սրտիս վրայ պահուում եմ միշտ ընտիր արմաղանի պէս:

1902



**Ս**եպէպ, բան չեմ ուզէ, իմ օրիս յընկնիս,  
Իմ ցաւերս քաշես, տեսնիս զօլայ է.  
Ինձի պէս էլողլու ձեռքի տակ մտնիս,  
Զաւհել օմրըդ մաշես, տեսնիս զօլայ է:

Կնիկդ, աղճիկդ զոռով տրօրթեն,  
Խօսելու չը թողնին, բերանդ ճոռթեն.  
Զաւակներդ յաշքիդ յառաջը մորթեն,  
Կայնիս մօտիկ աշես, տեսնիս զօլայ է:

Հօրդ ոտքէն բռնեն թապլեն խանտէկը,  
Գան աչքերը հանեն զազն ու օրտէկը.  
Ղայնար ջրի մէջը մօրդ ջանտէկը,  
Քու ձեռքովդ խաշես, տեսնիս զօլայ է:

Սրափը Աստըծմէն խնդրէ կը էսքան,  
Դիւշմըններդ գօռըդ քեզի փորել տան.  
Քու ճախպդ քու ձեռքովդ շինես խսկական,  
Քու ուրքովդ տաշես, տեսնիս զօլայ է:

1901



## ՑԱՆԿ

### Ա. Զ. Գ. Ի Գ. Բ Ո Ւ Թ Ի Ւ Ն Ը

Ազգի իմ, որքան նկուն մնաս . . . . .	3
Արևն ելաւ փախէք աստղեր . . . . .	4
Մինչկ կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ . . . . .	4
Դիմացկուն, համբերող, կըչկշան հաւիս . . . . .	5
Աղքատ հողագործ մի վհատիր կալոցը մօտ է . . . . .	6
Տեսակառակ կենդանեաց ձանկը ընկար քաջ բազէ . . . . .	7
Աշխարհն ընդհանուր քո սիրոյդ համար . . . . .	8
Առաւոտը շատ մօտ է . . . . .	10
Փոյլերիս մէջ միշտ սգազգեաց . . . . .	11
Էլ չեմ սիրում, ատեցի . . . . .	13
Փրկութեան աւետաբեր . . . . .	13
Դարձիր հայի բլբուլ . . . . .	14
Թող ես մշակ լինիմ . . . . .	15
Մըրի միջից ելան մըրջուրը մտան . . . . .	16
Աւետաբեր խօսնակը հայուն . . . . .	17
Ես մի ծառ եմ ծիբանի . . . . .	18
Ուզտի պոչ է բախտը հայոց . . . . .	19
Թող ինչպէս ընկել եմ . . . . .	20
Թող մնայ մէկ ժամանակ . . . . .	20
Խնդա, սիրուհիս, քեզ բարի վիճակ . . . . .	21
Խնչու լամ երբ չեմ մանուկ . . . . .	22
Անոյժ, ձմբան արև դարձաւ . . . . .	

### Ո. Շ Խ Ա. Բ Հ Ի Բ Ա. Ն Ը

Երկրագնտի տէրը, երբորդութիւնը . . . . .	25
Զգտում է ամենայն մարդ . . . . .	26
Բժիշկն առազգ, քարողիչն ապահով . . . . .	27
Մարմինդ մերկ, երեսդ պաղ . . . . .	28

Այսպէս է աշխարհի բանը	29
Անգույն Գալուխնը ծնաւ	30
Կամ սկսի շատ փող ունենաս	31
Աստուած չանէ մարդուն ապիկար	31
Զաւակի և գերդաստանի տէր	32
Ոչ աղօթք է անում, ոչ ուրախութիւն	33
Դասարկ եկայ, դասարկ կերթամ	34
Մարդկանց արարքը տեսնելով	35
Մարդ կայ զարդարուած է	36
Տրամութեան օթեան	37
Խաղաղ, առանց ցաւի	37

### Ա. Շ Ո Ւ Պ Ի Խ Բ Ա Տ Ը Ը

Իմ ձախորդութեանս մի ինդայ	41
Կակուղ փուշը ձեռք չի ծակեր	42
Եթէ մարդը մարդուն բարի կամենայ	43
Նեղութիւն քաշելս այլոց	44
Բարի, գեղեցիկ, առարինի ընկերը	45
Ամեն հոմերոս մէկ Զօյլոս ոճի	46
Չախուրդ օրերը ձմռաց նման կուզան ու կերթան	47
Որ սարին դիմեցի վրան ձիւն եկաւ	48
Երբ որ Աստուած կամենայ	49
Մարդկային ցեղի սկիզբը	50

### Ա. Զ Ն Ի Խ Ս Ե Ր Ը

Մաքուը նազելի կոչս	53
Նազելոյն ամակ է իջել	54
Շառագոյն վարդ այտերդ	54
Թէ քու աչք ու ունքդ ոհ են	55
Թէ պիտի գաս, ով սիրելի	56
Յօժար ևմ, ինչ որ կուզէ	57
Արքայութիւնը առանց ըեզ	57
Անուշիկ կոյս բարի բախտի	58
Արեից ես ծննդ թէ լուսնիսկից	59

Պաղ աղբիւրի մօտը կանգնած	60
Հրդէն դոյացաւ աչքերիցդ	61
Անբաժան է մինչի մահ	62
Երբեմն հոգուս հատորը	63
Շարժեցին սառած լրանս	63
Փառք Արարչին ցնծութեան առուակը	64

### Զ Ի Ի Ա Ն Ի Ն Մ Ե Ն Ո Կ

Քու մէջդ ես մի քայլ հողի մաս շունիմ	67
Տիրատեսիլ, սեաթոյր, խաւար ամպեր	67
Պիտի գովեմ մայր հողը, քամին	68
Պանդիսութեան մէջ լրացաւ	69
Ես կուզեմ ճշմարտութիւն	70
Ունիմ, փառք Աստուծոյ	71
Շնորհաց կենսատու ծառի հովանու	72
Ում համար կը մաշուիս	73
Անթէ թռչնիկ է աշուզը	73
Ի՞նչ ես քիթդ կախել	74
Ի՞նչու համար ինձ բանտի մէջ	75
Փառք քեզի Բարերար	76

### Մ Ր Տ Ա Բ Ո Ւ Պ Լ Խ Խ Ն Գ Ի Բ Ե Խ Ն Ո Ւ Ե Խ Բ

Երեսանկեալ աղաչում եմ, Տէր Աստուած	79
Ով ամենակարող Արարիչ Աստուած	79
Բոլոր ծաղկոցները բացուին	80
Զուխտակ շամամներդ դրախտ ծոցիդ	81
Յիսուն տարի ծառայել է հայ աղքին	82
Վենետիկի սուրբ Ղազարու կղզին	83
Հազարաւոր համակրողներուդ մէջ	84
Ողբացէք, ով Արամեանք,	85
Շնորհաւոր քու տօնդ պարոն Մովսէս	87
Նուէր իմ մի ծանօթիս	88
Մէծ բանաստեղծ, մեծ աշուղ	89
Այսուհետեւ ինձի լոյս չէ հարկաւոր	90

Դրախտի տունկ,	ինկի ծառ ես	91
Աստուած իմ, նոր հոգի տուր		92

### ԵՐԳԵՓՈՒՆՉԱ

Երեք ձայն կայ, շատ է սիրում ականջս	95
Հոգիդ սիրեմ մատրուակ	95
Հիւսիսից փչեց սառն հով	96
Օտարութեան մէջը զուր անցաւ	98
Իմ սիրոս ցաւ ունի իւր ցաւն է	99
Գնա արքայանիստ մայրաքաղաքը	100
Հիւսիսային կողմից ելած ամպիկներ	101
Չորս հառ աղջիկ ունիմ տանը	102
Մթնեց երկինքը, օդը վատացաւ	103
Ելի մթնեց յաջողութեան երկինքը	104
Ելի միտքս վեր սլացաւ	105
Արի հայրիկ, արի իմ կեանք.	106
Քաղցը մայրիկ հոգոյս հատոր	107
Լարող սրտի քնարի նուրբ թելերը	108

### ԱՇՈՒՂԻ ԴԱՅԱՐԸ

Երգն ու եղանակը թռչուն են ջուխտակ .	111
Չնոտ սարեր, ելման գետեր	112
Մեծ մարդու մէկը, նժոյդ ձին տակին	113
Աշուղն ու բըլբուկը	115
Ինչ կենդանի փոքրին կուլ տալ է ուզում .	118
Այնքան ինձպէս չեղար, դու անխղճմտանք	121
Որի շուրջը դժնիկ փշով է պատած	123

### Գ.Ա.Ի.Ա.Ռ.Ա.Կ.Ա.Ն

Սէրըդ, սաւտէդ անձախ տուեր ես	126
Տէյմօր Եփ, տէյմօր Եփ,	127
Ասլենին կատու կը շինես	127

Սէվկիւլի ախալէբս, ջանս, ջիկեալս	128
Տը մանչ, էդման խելառ բաներ	129
Ցռնտիկ, մոնտիկ կոկիկ—մոկիկ եար	130
Զինարի պէս, պօյդ պուսդ	130
Սարեր, խորունկ ձորեր խապարմ տուէք	131
Չուչուստ, շուչուստ մէկմ կուգայ	132
Եար քու էշիսիդ կըակովը	133
Սեպէալ, բան չեմ ուզե, իմ օրիս ընկնիս	133



աղաքան ունից ազգային պահպան  
կ պահպան աշխայ մանաւ ունից  
պահպան—թիվը թիվում պահպան  
բանու պարագաներ պահպան  
պահպան պահպան պահպան պահպան  
պահպան պահպան պահպան պահպան  
պահպան պահպան պահպան պահպան

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431363

51985